ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

CRRC ARMENIA

Ելակետային ուսումնասիրություն

# ԲԱՀՄԱՉԱՓ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան հիմնադրամ,
Երևան 2024

Ելակետային ուսումնասիրություն

# ԲԱՀՄԱՉԱՓ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ

ԵՎՐՈՊԱՅԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

CRRC ARMENIA

**«Բազմաչափ աղքատությունը Սյունիքում. ելակետային ուսումնասիրություն»** հետազոտությունն իրականացվել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան հիմնադրամի կողմից «Դիմակայուն Սյունիք թիմ Եվրոպա» նախաձեռնության ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից՝ «NEAR/EVN/2023/EA-NP/0138» պայմանագրի ներքո:

Սույն զեկույցը ներկայացնում է բազմաչափ աղքատության վերաբերյալ Սյունիքի մարզում իրականացված հետազոտության արդյունքները: Զեկույցի բովանդակությունը հիմնված է առաջնային տվյալների ուսումնասիրության վրա: Հետազոտության բովանդակության ողջ պատասխանատվությունը կրում են հեղինակները, ուստի պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Սույն նյութի բնօրինակը պատրաստվել է անգլերենով, ուստի, հայերեն և անգլերեն տարբերակների միջև տեխնիկական անհամապատասխանությունների պարագայում պետք է հիմք ընդունել անգլերեն զեկույցը: Զեկույցի կամ դրա առանձին մասերի վերահրատարակումը կամ վերարտադրությունը էլեկտրոնային կամ տպագիր տարբերակներով պետք է իրականացվի պատշաճ մեջբերումներով:

Մեջբերման օրինակ.

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ (2024): *Բազմաչափ աղքատությունը Սյունիքում. ելակետային ուսումնասիրություն*, Երևան: Եվրոպական միություն:

**Հեղինակներ**

Սրբուհի Միչիկյան

Անի Ավետիսյան

Սոֆիա Զուևա

Վահե Մովսիսյան

**Խմբագիրներ**

Սոնա Բալասանյան

Հայկ Սմբատյան

Սեդա Անանյան

ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամը խորին շնորհակալություն է հայտնում իր բոլոր ներկա և նախկին աշխատակիցներին, փորձագետներին ու հետազոտողներին, ովքեր ներդրում են ունեցել զեկույցի ստեղծման գործում: Ավելին, զեկույցը և դրա հիմքում ընկած հետազոտությունը հնարավոր չէին լինի առանց տվյալների հավաքագրման բազմաթիվ մասնագետների, ասոցացված հետազոտողների, մեթոդաբանների, փորձագետների և խմբագիրների շարունակական ջանքերի:

## ՀՌԿԿ-Հայաստանի մասին

ՀՌԿԿ-Հայաստանը, որը հիմնադրվել է 2013 թվականին, անկախ հետազոտական կենտրոն է: Այն իրականացնում է բարձրորակ հետազոտություններ, որոնք կարող են օգնել դիմակայելու սոցիալ-տնտեսական և քաղաքական մարտահրավերներին Հարավային Կովկասում: Կենտրոնանալով տվյալահեն որոշումների կայացման գաղափարի վրա՝ կազմակերպությունը նպատակ ունի խթանել ժողովրդավար կառավարումը: ՀՌԿԿ-Հայաստանն իր 17 աշխատակիցներով, կամավորներով և պրակտիկանտներով մինչև 2025 թվականը նախատեսում է դառնալ առաջատար հետազոտական կենտրոն՝ նպաստելով կենսունակ հետազոտական համայնքի ձևավորմանը և միմյանց կապելով տեղական, տարածաշրջանային և համաշխարհային գործընկերներին:

## Եվրոպական միության մասին

Եվրոպական Միության անդամ երկրները որոշել են միավորել իրենց նորարար գիտելիքները, ռեսուրսները և ճակատագրերը: Նրանք միասին կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի՝ միաժամանակ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատական ազատությունները: Եվրամիությունը հավատարիմ է իր ձեռքբերումներն ու արժեքները կիսելու իր սահմաններից դուրս գտնվող երկրների և ժողովուրդների հետ:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

© – 2024 – Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան:
Բոլոր իրավունքները պաշտպանված են
Արտոնագիր՝ Եվրոպական միություն

Հետադարձ կապ՝ crrc@crrc.am | crrc.am

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ ..... 3

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 4**

**2. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ..... 6**

**3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ ..... 8**

- 3.1 Մեթոդաբանություն ..... 8
- 3.2 Սահմանափակումներ ..... 12

**4. ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ..... 16**

- 4.1 Ավելցուկների վերլուծություն ..... 16
- 4.2 Գերակայության վերլուծություն ..... 18
- 4.3 Զույգ-զույգ համեմատություններ ..... 19

**5. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ** ..... 22

- 5.1 ԲԱԻ արդյունքներ ..... 22
- 5.2 Ներդրում ..... 23
- 5.3 Արդյունքներն ըստ ցուցիչների ..... 26

**6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... 36**

**7. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ..... 38**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ..... 41

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ԴԱԾՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ..... 43

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ԲԱԻ ԱՌԱՆՁԻՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՇԵՄԵՐԸ ..... 48

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

| | |
|---|---|
| **ԱԶԳ** | Ավստրիայի զարգացման գործակալություն |
| **ԱՐՄՍՏԱՏ** | Հայաստան Հանրապետության Վիճակագրական կոմիտե |
| **ԱՖ** | Ալքայր-Ֆոսթեր |
| **ԲԱ** | Բազմաչափ աղքատություն |
| **ԲԱԻ** | Բազմաչափ աղքատության ինդեքս |
| **ԵՄ** | Եվրամիություն |
| **ԶՖԳ** | Զարգացման ֆրանսիական գործակալություն |
| **ՀԲ** | Համաշխարհային բանկ |
| **ՀԲԸՄ** | Հայկական բարեգործական ընդհանուր միություն |
| **ՀՀ** | Հայաստան Հանրապետություն |
| **ՀՌԿԿ** | Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն |
| **ՄԱԶԾ** | Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր |
| **ՄՓՄԶ** | Միկրո, փոքր և միջին ձեռնարկություններ |
| **ՊՀԾ** | Պարենի Համաշխարհային ծրագիր |
| **ՏԶՀԿ** | Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն |
| **ՏԻՄ** | Տեղական ինքնակառավարման մարմին |
| **ՏԿԵՆ** | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն |
| **ՏՏԿԱՀ** | Տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտություն |
| **ՔՀԿ** | Քաղաքացիական հասարակության կազմակերպություն |
| **ՕԱՄԶՆ** | Օքսֆորդի աղքատության և մարդկային զարգացման նախաձեռնության |

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը կազմվել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան հիմնադրամի կողմից՝ առաջնային տվյալների հավաքագրմամբ իրականացված հետազոտության և վերլուծության հիման վրա: Հետազոտությունը համայնքային մակարդակում ուսումնասիրում է բազմաչափ աղքատությունը (ԲԱ) Սյունիքի մարզում: Այն միտված է նպաստելու «Դիմակայուն Սյունիքի թիմ Եվրոպա» նախաձեռնությանը՝ հետագայում իրականացնելու դրամական աղքատության և զրկանքների մասին ազդեցության գնահատում: Հետազոտությունն իրականացվել է տնային տնտեսությունների հարցման միջոցով, որի արդյունքում չափվել է համայնքների բնակիչների շրջանում բազմաչափ աղքատության հանդիպման հաճախականությունը և ինտենսիվությունը: Չափման սկզբունքը մշակվել է Սաբինա Ալքայրի և Ջեյմս Ֆոսթերի կողմից Օքսֆորդի աղքատության և մարդկային զարգացման նախաձեռնության (ՕԱՄՁՆ) շրջանակներում՝ ուղղված բազմաչափ աղքատության ինդեքսի մեթոդաբանության ստեղծմանը[1]: Սույն հետազոտությունը հաջորդում է ՀՌԿԿ-Հայաստանի կողմից 2021 թվականին իրականացրած մեկ այլ նմանօրինակ փորձնական ուսումնասիրությանը, որի շրջանակում չափվել է Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի բազմաչափ աղքատությունը[2]: Հենց այդ ուսումնասիրության մեթոդաբանությունն ու հարցաշարն էլ հիմք են ծառայել ներկա ուսումնասիրության համար՝ գործիքի և հաշվարկի մեթոդաբանության մեջ կատարելով որոշակի ճշգրտումներ, որոնք հիմնված են ՕԱՄՁՆ-ի դիտարկումների և նախորդ ուսումնասիրությունից քաղված դասերի վրա:

Այս ուսումնասիրության որդեգրած մոտեցումը փոխում է աղքատությունը բացառապես դրամական միջոցներով չափելու ավանդական մոտեցումը: Ի հակադրություն՝ այն ուսումնասիրում է աղքատությունը 5 չափականությունների միջոցով՝ (1) հիմնարար կարիքներ, (2) բնակարանային պայմաններ, (3) կրթություն, (4) աշխատանք և (5) առողջապահություն: Սա թույլ է տալիս աղքատության մասին ավելի համապարփակ և համատեքստին հատուկ պատկերացում կազմել: Նման չափումը թույլ է տալիս նաև աղքատությունը հասկանալ ավելի համապարփակ և տեղական համատեքստին համահունչ կերպով: Հետևապես, աղքատությունը դրամական կամ սպառման հիմքով չափելու փոխարեն, ինչը հաճախ իրականացվում է աղքատության հետազոտություններում, այս բազմաչափ մոտեցումը փորձում է բացահայտել աղքատության տարբեր դրսևորումները՝ անբավարար բնակարանային պայմանները, սոցիալական ծառայությունների սակավ հասանելիությունը, առողջապահության խնդիրները, աշխատանքի հետ կապված զրկանքները և այլն: Նախկինում Ալքայր-Ֆոսթերի (ԱՖ) մեթոդաբանությամբ Հայաստանում իրականացված բազմաչափ աղքատության չափումն

1. Alkire, Sabina, and James Foster. 2011. "Counting and Multidimensional Poverty Measurement." Journal of Public Economics 95 (7): 476–87. https://doi.org/10.1016/j.jpubeco.2010.11.006
2. Caucasus Research Resource Center-Armenia Foundation. 2023. "Community-Level Multidimensional Poverty in Armenia". Yerevan: European Union.

իրականացվել է ՀՀ Վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՏԱՏ) և Համաշխարհային բանկի կողմից[3]՝ տարանջատելով մարզկենտրոնը, քաղաքային և գյուղական համայնքները:

Սույն զեկույցը մեկնարկում է Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի ուրվագծմամբ: Այնուհետև, ներկայացվում է հետազոտության դիզայնը՝ նկարագրելով ընտրված մեթոդաբանությունն ու հետազոտության սահմանափակումները: Բացահայտումների հուսալիությունն ապահովելու համար, նախքան բազմաչափ աղքատության ինդեքսի (ԲԱԻ) վերլուծությանն անցնելը, զեկույցն անդրադառնում է կայունության վերլուծությանը, որտեղ արտացոլված են ավելցուկների, գերակայության և զույգ-զույգ համեմատությունների վերլուծությունը:

Հաջորդող բաժինը վերլուծում է հետազոտության արդյունքները՝ մատնանշելով ուսումնասիրության առանցքային բացահայտումներն այն մասին, թե ինչպես են տարբեր ցուցիչներն արտացոլում ընդհանուր զրկանքը: Եվ վերջում, զեկույցը եզրափակվում է մի շարք առաջարկներով՝ հիմնված հետազոտության բացահայտումների վրա:

Այս հետազոտությունն իրականացվել է «Դիմակայուն Սյունիքի թիմ Եվրոպա» նախաձեռնության ծրագրի շրջանակներում որպես դրա մեկնարկային հետազոտական փուլի մաս: Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից:

Նախաձեռնության ընդհանուր նպատակն է.

- բարելավել միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ) բիզնես միջավայրը և խթանել մասնավոր հատվածի մրցունակությունը,
- բարելավել բարձրորակ, մարդակենտրոն հանրային ծառայությունների հասանելիությունը,
- առաջնահերթություն տալ տարածաշրջանային կանաչ զարգացմանը և նպաստել կենսաբազմազանության պաշտպանությանը, կայուն օգտագործմանը և վերականգնմանը:

Այս զեկույցը ներկայացնում է մի շարք օգտակար բացահայտումներ և գիտական ներդրումներ: Վերլուծությունը ցույց է տալիս, որ Կապանից զատ այլ քաղաքային համայնքների համեմատ գյուղական համայնքներում զրկվածության մակարդակն զգալիորեն բարձր է: Մինչդեռ Կապանում բացակայում են զրկվածության շեմից (0.33) ներքև գտնվող տնային տնտեսությունները: Բացի Կապանից՝ այլ քաղաքների շրջանում ԲԱԻ-ի հաշվարկն առավել մեծ ցուցանիշ ունի Գորիսում: Քաղաքային համայնքների պարագայում զրկվածությունը հիմնականում արտահայտվել է հիմնարար կարիքների, առողջապահության և աշխատանքի չափականություններում (բոլոր վայրերում ԲԱԻ-ի գրեթե հավասար բաշխվածությամբ): Գյուղական համայնքների դեպքում զրկվածության էական չափականություններն են առողջապահությունը և բնակարանային պայմանները: Սրանց հաջորդում են հիմնարար կարիքները: Ցուցիչների մակարդակում հիմնական բացահայտումներից մեկն այն է, որ գյուղական համայնքների տնային տնտեսությունների ճնշող մեծամասնությունը զրկված է առողջ ջեռուցումից, իսկ նրանց գրեթե կեսը՝ տաք հոսող ջրից: Գյուղական տնային տնտեսություններին առավել հատուկ մեկ այլ խնդիր է տրանսպորտից և առողջապահական ծառայություններից զրկված լինելը:

Ներկայացված բացահայտումներն ընդգծում են քաղաքային և գյուղական բնակչության միջև առկա կենսապայմանների խորը անհավասարությունը՝ մատնանշելով այն կարևոր ոլորտները, որոնք պահանջում են նպատակային միջամտություններ՝ մեղմելու աղքատությունը և բարելավելու կյանքի որակը:

3. Armstat, and World Bank. 2022. "SOCIAL SNAPSHOT AND POVERTY IN ARMENIA - Statistical and Analytical Report." Yerevan. https://armstat.am/file/article/poverty_2019_english_2.pdf.

# 2. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Սյունիքը Հայաստանի Հանրապետության մեծությամբ երկրորդ մարզն է՝ 4506 քմ մակերեսով, որը կազմում է երկրի ընդհանուր տարածքի ավելի քան 15%-ը[4]: Մարզը Հայաստանի տնտեսության համար կենսական նշանակություն ունի՝ ապագա զարգացման զգալի ներուժով: Արդյունաբերական աճի հավասարակշռումը շրջակա միջավայրի պաշտպանության հետ, ենթակառուցվածքներն ու հանրային ծառայությունների բարելավումը և զբոսաշրջության խթանումը հիմնականում համարվում են մարզի ներկա և ապագա զարգացման ոլորտները:

Սյունիքի մարզը բաժանված է 8 համայնքի՝ ներառելով 7 քաղաք (ներառյալ՝ մարզկենտրոն Կապանը) և 132 գյուղ: Լինելով հանրապետության ամենամեծ մարզերից մեկը՝ Սյունիքը թերբնակեցված է: Բնակչության խտությունը ամենացածրերից է (երկրորդը՝ Վայոց Ձորի մարզից հետո). բնակեցված է 134,600 մարդով՝ 29.9 մարդ՝ քառակուսի կիլոմետրում[5]: Սյունիքը 18.8% արտադրության մասնաբաժնով նպաստում է Հայաստանի արդյունաբերությանը (մեծությամբ երկրորդն է Երևանից հետո, որտեղ արդյունաբերական արտադրանքի մասնաբաժինն ընդհանուր առմամբ կազմում է 34.8%)[6]: Սյունիքի արդյունաբերական արտադրանքի 85.4%-ը կազմում է հանքագործական արդյունաբերությունը և բացահանքերի շահագործումը: Մնացած 14.6%-ը հիմնականում բաշխված է մշակող արդյունաբերության և էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտների միջև: Մարզը հայտնի է իր հանքարդյունաբերությամբ, մասնավորապես՝ պղնձի և մոլիբդենի արդյունահանմամբ: Ընդ որում, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը համարվում է տարածքի խոշոր արդյունաբերական դերակատարը:

Ազգային վիճակագրության համաձայն՝ Սյունիքում տնային տնտեսությունների 26.4%-ը բաղկացած է երկու անդամից, 36.5%-ը՝ երեքից, իսկ 19%-ը՝ չորս անդամից[7]: Տնային տնտեսությունների մեծամասնությունը (92%) ապրում է 1950-1970 թվականներին կառուցված քարե պատերով շենքերում: Հավելենք, որ տնային տնտեսությունների 85.5%-ն ունի բջջային հեռախոս, իսկ ֆիքսված հեռախո-

4. Տե՛ս https://armstat.am/file/article/marzer_2022_28.pdf:
5. Տե՛ս Data as of January, 2023, https://armstat.am/file/doc/99541043.pdf:
6. Տե՛ս https://armstat.am/file/doc/99546313.pdf:
7. Տե՛ս https://armstat.am/am/?nid=953:

սակապ ունի միայն 4.5%-ը: Սա նշանակում է, որ բնակչության մեծամասնությունը նախընտրում է և ի վիճակի է վճարել բջջային կապ ունենալու համար[8]: Այդ իմաստով, Սյունիքում ֆիքսված հեռախոսի բացակայությունը չարժե դիտարկել որպես զրկանք:

Անդրադառնալով կրթությանը նշենք, որ ազգային վիճակագրության համաձայն՝ 15 և բարձր տարիքի բնակչության շրջանում միջնակարգ կրթություն չի ստացել քաղաքաբնակների միայն 6%-ը, իսկ գյուղաբնակների՝ 12%-ը[9]:

Մարզում զբաղվածության հնարավորությունները հիմնականում կենտրոնացած են գյուղատնտեսության, հանքարդյունաբերության և հանրային ծառայությունների շուրջ: Գործազրկության մակարդակը 2021 թվականի դրությամբ կազմում է 9.8%: Ընդհանուր առմամբ՝ մարզում գործազրկության պատկերն անհավասարակշռված է: Ըստ էության, զբաղվածությունն ու դրա դիվերսիֆիկացումը մարզի զարգացման առաջնահերթություններից է[10]: Սյունիքում եկամուտների մակարդակն, ընդհանուր առմամբ, ցածր է հանրապետական միջինից, ինչը նպաստում է տնտեսական անհավասարությանը և արտագաղթին: Չնայած, պետք է նշել, որ մարզում միգրացիայի մակարդակը բավականին ցածր է. միգրացիոն գործընթացներում ներգրավված տնային տնտեսությունների անդամների շրջանում այն երկրի մակարդակով կազմում 2.2%-ը[11]: Հանքարդյունաբերության ոլորտում ավելի բարձր աշխատավարձերով պայմանավորված՝ բնակչությունն ամենաաղքատների թվում չէ. այստեղ տեղակայված է երկրի աղքատ բնակչության միայն 4.3%-ը[12]:

Երկրի գյուղատնտեսական արտադրանքի մեջ Սյունիքի ներդրումը 2023 թվականի դրությամբ կազմում է 6.1%[13]: Գյուղատնտեսությունը տեղական տնտեսության զգալի մասն է, իսկ հողագործությունն ու անասնապահությունը հիմնական զբաղմունքներն են:

Սյունիքը տեղակայված է Իրանի և Ադրբեջանի սահմանին: Այս փաստը մարզը դարձնում է աշխարհաքաղաքական նշանակության տարածաշրջան: Այն ծառայում է որպես տարածաշրջանային առևտրի և ռազմավարական դիրքավորման միջանցք, հետևաբար մարզում կենսամակարդակի բարձրացումը պետական քաղաքականության առաջնահերթություններից է[14]: Ավելին, Սյունիքը դարձել է Արցախից բռնի տեղահանվածներին հյուրընկալող հիմնական մարզ: Թեև տեղահանումը մարզի սոցիալ-տնտեսական վիճակի վրա զգալի ազդեցություն է ունեցել, սակայն ազդեցությունների համապարփակ գնահատում դեռևս չի իրականացվել: Հետևաբար, մարզում ԲԱ-ի նվազմանն ուղղված քաղաքական ջանքերում պետք է հաշվի առնել նաև տեղահանման հետևանքները:

8. Տե՛ս նույն տեղում:
9. Տե՛ս նույն տեղում:
10. Տե՛ս http://syunik.mtad.am/files/docs/29670.pdf:
11. Տե՛ս https://armstat.am/file/article/poverty_2023_en_2.pdf:
12. Տե՛ս նույն տեղում:
13. Տե՛ս https://armstat.am/file/article/sv_12_23a_122.pdf:
14. Տե՛ս http://syunik.mtad.am/files/docs/29670.pdf:

# 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Այս գլուխն ուրվագծում է տվյալ զեկույցի հետազոտական շրջանակն ու մեթոդաբանությունը: Առաջին հերթին ներկայացվում է մեթոդաբանությունը, ապա համայնքային մակարդակում *բազմաչափ աղքատության ինդեքսի (ԲԱԻ)* հաշվարկման գործողությունների նկարագրությունը:

## 3.1 Մեթոդաբանություն

Սույն ուսումնասիրության հիմքում ընկած է Ալքայր-Ֆոսթերի (ԱՖ) մեթոդը[15], որով ԲԱԻ հաշվարկման հիմնական նպատակը սուր բազմաչափ աղքատության չափումն է: «Սուր բազմաչափ աղքատություն» եզրը հղվում է երկու բնութագրիչների. (1) միջազգայնորեն ընդունված նվազագույն չափանիշներին չհամապատասխանող պայմաններում ապրող մարդիկ՝ ըստ հիմնարար գործառնությունների (“functionings”) ցուցիչների և (2) միևնույն համաձայնեցված չափանիշներին չհամապատասխանող պայմաններում ապրող մարդիկ՝ ըստ միաժամանակ մի քանի նման ցուցիչների[16]: Մեթոդն իր բնույթով բազմաչափ է, քանի որ հիմնված է մի շարք ցուցիչների վրա՝ խմբավորված մի շարք չափականությունների ներքո, որոնք արտացոլում են աղքատության տարբեր կողմերը:

Որոշելու համար, թե ով է համարվում բազմաչափ աղքատ, օգտագործվել է երկակի շեմի («dual-cut-off») մոտեցումը: Նախ որոշվել է *զրկանքի շեմը* բոլոր ցուցիչների համար: Այստեղ խոսքն այն շեմի մասին է, որն անցած անհատը համարվում է տվյալ ցուցիչով զրկանք կրող: Օրինակ՝ երբ չափահասների սննդի սպառումը ցածր է սննդի աղքատության գծից, տնային տնտեսությունը համարվել է զրկանք կրող: Երկրորդը՝ *աղքատության շեմը* (K), որոշում է (կշռված) ցուցիչների այն հարաբերակցությունը, որից ավելի լինելու դեպքում անձը համարվում է բազմաչափորեն աղքատ: Օրինակ՝ այն անձինք, ովքեր զրկված են ցուցիչների մեկ երրորդից ավելիում, համաշխարհային ԲԱԻ-ի արդյունքներով համարվել են բազմաչափորեն աղքատ:

Հաջորդիվ, ԱՖ մեթոդի համաձայն, բազմաչափ աղքատությունը չափվում է՝ երկու տեսակի տեղե-

15. Alkire, Sabina, James E. (James Eric) Foster, Suman Seth, Maria Emma Santos, José Manuel Roche, and Paola Ballón. 2015. Multidimensional Poverty Measurement and Analysis. First. Book, Whole. New York, NY: Oxford University Press. https://doi.org/10.1093/acprof:oso/9780199689491.001.0001.
16. ԱՖ մեթոդում գործածվում է «գործառնություններ» տերմինը, որը Ամարթյա Սենի ընդունակության մոտեցման համաձայն՝ նշանակում է մարդկանց այնպիսի լինելիությունը և գործունեությունը, որը նրանք արժևորում են և պատճառ ունեն արժևորելու:

կատվության համադրմամբ, որոնք անմիջականորեն կապված են սուր աղքատության հետևյալ երկու բնութագրիչների հետ՝ աղքատության հանդիպման հաճախականություն (հայտնի նաև որպես մարդաքանակի հարաբերակցություն) և ինտենսիվություն: *Հաճախականությունը* (H) վերաբերում է բազմաչափորեն աղքատ մարդկանց համամասնությանը: *Ինտենսիվությունը* (A) կշռված այն ցուցիչների միջին համամասնությունն է, որոնցում մարդիկ համարվել են բազմաչափ իմաստով աղքատ: Ինդեքսը կազմվել է հաճախականության ու ինտենսիվության բազմապատկմամբ՝ ԲԱԻ = H x A, որի արժեքը տատանվում է 0-ից 1 միջակայքում:

Այս երկու չափումների համադրումը ԱՖ մեթոդի յուրահատկությունն է: Երկու տարբեր երկրներ կարող են ունենալ հաճախականության միևնույն չափը, այն դեպքում, երբ կոնկրետ զրկանքների իմաստով աղքատության ինտենսիվությունը կարող է էականորեն տարբեր լինել: Մի երկրի աղքատ բնակչությունը, հնարավոր է, զրկված լինի ԲԱԻ-ի չափման մեջ ներառված չափականությունների 1/3ից, մինչդեռ մյուս երկրինը՝ այդ չափումների 2/3-ից, չնայած երկուսն էլ կարող են ունենալ հաճախականության նույն ցուցանիշը: Նմանապես ԲԱԻ-ն կարող է մատնանշել աղքատության ուղղակի կրճատումը, քանի որ այն գրանցում է ոչ միայն աղքատության շեմը հաղթահարողների թիվը (հաճախականության կրճատում), այլև աղքատ մարդկանց կրած զրկանքներում փոփոխությունները: Հետևաբար, երբ մարդն այլևս զրկված չէ որևէ մի ցուցիչով, ԲԱԻ ցուցանիշը նվազում է, չնայած, որ աղքատության հաճախականությունը շարունակում է մնալ անփոփոխ: Սա կարող է պետությունների և կազմակերպությունների համար՝ բնակչության շրջանում աղքատության մակարդակի փոփոխությունները իրենց ամբողջության մեջ մշտադիտարկելու հզոր գործիք դառնալ:

Աղքատության բազմաչափ չափումն իրականացվում է յոթ քայլի միջոցով՝

1. տվյալների աղբյուրի հստակեցում,
2. դիտարկման և վերլուծության միավորների ընտրություն,
3. չափականությունների և ցուցիչների ընտրություն,
4. զրկանքի շեմի հստակեցում,
5. չափականությունների և ցուցիչների կշիռների ընտրություն,
6. աղքատության շեմի հստակեցում,
7. ԲԱԻ-ի հաշվարկում:

Հավելյալ քայլ է նաև տվյալների տարանջատումը՝ ըստ չափականությունների, ցուցիչների և համապատասխան այլ ենթախմբերի: Բաժին 5-ը ներկայացնում է այդ արդյունքները: Մեկ այլ ժամանակահատվածի վերաբերյալ տվյալների առկայության պարագայում այս արդյունքները հնարավոր կլինի համեմատել ժամանակի մեջ: Քանի որ սա Սյունիքի մարզում նման չափում իրականացնելու առաջին փորձն է, ժամանակային շարքերի վերլուծություն առայժմ հնարավոր չէ իրականացնել: Ի վերջո, ստեղծված ինդեքսների համար կայունության վերլուծություն է իրականացվել, որը թույլ է տալիս հաստատել հետազոտության նախագծման որակը և տեսնել ի հայտ եկած թերությունները:

## Դեպքը, տվյալների աղբյուրները և վերլուծության միավորը

Հայաստանում բազմաչափ աղքատության հետազոտություն իրականացվել է ազգային մակարդակում ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից, Համաշխարհային բանկի (ՀԲ) հետ համագործակցությամբ[17]: Այդ՝ նախկինում արված հետազոտությունը, հիմնված է եղել 2010-ից 2015 թվականներին Հայաստանում իրականացված Տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության տվյալների վրա, որոնք ուսումնասիրում էին անհատների և տնային տնտեսությունների կրթության, աշխատաշուկայի պայմանները, առողջապահական վար-

17. Armstat, and World Bank. 2022. "SOCIAL SNAPSHOT AND POVERTY IN ARMENIA - Statistical and Analytical Report." Yerevan. https://armstat.am/file/article/poverty_2019_english_2.pdf.

քը և կենսապայմանները: Այս տվյալների հիման վրա ՀԲ-ն Հայաստանի համար իրականացրել է ԱՖ մեթոդով ԲԱԻ-ի հաշվարկ: ԲԱԻ կազմելու համար ՀԲ-ն օգտագործել է հինգ չափականություն՝ հիմնարար կարիքներ, բնակարանային պայմաններ, կրթություն, աշխատանքի և առողջապահության հասանելիություն: Նույն չափականությունները օգտագործվել են նաև այս հետազոտության շրջանակներում:

ՀԲ-ի կողմից հաշվարկված ԲԱԻ-ն չափել է Հայաստանում բազմաչափ աղքատությունն ազգային մակարդակում՝ տարանջատելով քաղաքային համայնքների, գյուղական համայնքների և Երևանի ցուցանիշները: Նախորդիվ Հայաստանում ՀՌԿԿ-Հայաստանի կողմից ուսումնասիրվել է Լոռիում, Շիրակում և Տավուշում համայնքային մակարդակում բազմաչափ աղքատությունը, քանի որ վերջիններս եղել են Հայաստանի ամենաաղքատ մարզերն ըստ ԱՐՄՍՏԱՏ-ի 2020 թվականի տվյալների:

Սյունիքի մարզի համար համապատասխան ինդեքսը հիմնված է ՀՌԿԿ-Հայաստանի կողմից ավելի վաղ իրականացված ուսումնասիրության ընթացքում ստանդարտացված քանակական հետազոտության միջոցով հավաքագրված տվյալների վրա և փոփոխվել է՝ հետևելով ՕԱՄՁՆ-ի դիտարկումներին: Հետազոտության համար դաշտային աշխատանքն իրականացվել է 2024 թվականի ապրիլի 29-ից մայիսի 26-ն ընկած ժամանակահատվածում Սյունիքի մարզի թիրախավորված 800 տնային տնտեսությունների շերտավորված պատահական ընտրանքով: Դաշտային աշխատանքից հետո ընտրանքի փաստացի չափը կազմել է 832: Դաշտային աշխատանքների ավարտից հետո ՀՌԿԿ-Հայաստանը մանրակրկտորեն զտել է տվյալները, որի արդյունքում 663 տնային տնտեսությունների տվյալներ անցել են ամբողջականության, ճշգրտության, վավերականության, կրկնելիության, հուսալիության որակի շեմերը և ի վերջո հիմք են դարձել ինդեքսի հաշվարկման համար: Հարցաթերթիկն ուրվագծում է տնային տնտեսությունները որպես դիտարկման միավոր, ինչը նշանակում է, որ բազմաչափ աղքատությունը սկզբնապես գնահատվում է տնային տնտեսությունների մակարդակով:

Հարցումներն իրականացվել են տնային տնտեսության անդամների հետ առերես՝ համակարգչային ծրագրի աջակցմամբ անհատական հարցազրույցի (CAPI) մեթոդով: Առավել մանրամասն տեղեկատվությունների ընտրանքի և դաշտային աշխատանքների վերաբերյալ կարելի է ծանոթանալ Հավելված Ա-ում:

## ԲԱԻ. չափելով աղքատությունը

### Չափականություններ և ցուցիչներ

Սյունիքում ԲԱԻ-ի հաշվարկում ներառված է հինգ չափականություն՝ հիմնարար կարիքներ, բնակարանային պայմաններ, կրթություն, աշխատանք և առողջապահություն: Այս չափումներում ներառվել է աղքատության 26 ցուցիչ (տե՛ս Աղյուսակ 1):

### Զրկվածության շեմեր

Յուրաքանչյուր ցուցիչ ունի իրեն հատուկ զրկանքի շեմը՝ հասկանալու, թե ինչ պայմաններում է տվյալ տնային տնտեսությունը համարվելու զրկանք կրող: Արդյոք այս կամ այն ցուցիչով տնային տնտեսությունը զրկված է, թե ոչ՝ որոշվել է հարցման արդյունքում հավաքագրված տվյալներով: Որոշ ցուցիչներով զրկանքի մակարդակը որոշվել է՝ ելնելով հարցաթերթում առկա մեկ համապարփակ հարցին տրված պատասխանից: Այլ ցուցիչներում զրկանքի մակարդակը որոշվել է մի շարք հարցերի պատասխանների համադրման արդյունքում: Քանի որ յուրաքանչյուր շեմի նկարագրությունը բավականին ծավալուն է, այն ներկայացվում է առանձին՝ Հավելված Բ-ում:

## Կշիռներ

ԲԱԻ-ի շրջանակներում կիրառվող չափականությունների ու ցուցիչների ընտրությունից հետո, յուրաքանչյուրի համար որոշվել է կշռի չափ: ԲԱԻ-ի հինգ չափականությունները կշռվել են հավասարապես՝ յուրաքանչյուրը 1/5 չափով: Յուրաքանչյուր ցուցիչ տվյալ չափման շրջանակներում ստացել է հավասար կշիռ, որը հնարավորություն է տվել ունենալու, այսպես կոչված, հավասարաչափ ներկառուցված կշիռներ: Աղյուսակ 1-ը ներկայացնում է ցուցիչների համար օգտագործված կշիռները:

**Աղյուսակ 1. ԲԱԻ օպերացիոնալ տրամաբանություն**

| Չափականություններ | Ցուցիչներ | Ցուցիչների կշիռը |
|---|---|---|
| **Հիմնարար կարիքներ** | Ծայրահեղ պարենային աղքատություն<br>Արժանապատիվ կյանք<br>Մարդասիրական օգնություն<br>Փոխանցումներից կախվածություն | 1/20 |
| **Բնակարանային պայմաններ** | Սուբյեկտիվ բնակարանային պայմաններ<br>Պատշաճ բնակարանային պայմաններ<br>Գերբնակեցում<br>Առողջ ջեռուցում<br>Կենտրոնացված ջրամատակարարման համակարգի մշտական հասանելություն<br>Կենտրոնացված ջրահեռացում և աղբահանություն<br>Հոսող տաք ջուր<br>Հանրային ծառայությունների որակ<br>Տրանսպորտի հասանելիություն<br>Տնային տնտեսությանը պատկանող ակտիվներ | 1/50 |
| **Կրթություն** | Միջնակարգ կրթություն<br>Պարտադիր կրթություն<br>Որակյալ կրթական ծառայություններ<br>Կրթության հասանելիություն | 1/20 |
| **Աշխատանք** | Աշխատաշուկայի մասնակցություն<br>Երկարաժամկետ գործազրկություն<br>Արժանապատիվ աշխատանք<br>Թերզբաղվածություն | 1/20 |
| **Առողջապահություն** | Առողջապահական ծառայությունների մատչելիություն<br>Սովորական գործունեության դադարեցում<br>Առողջապահական ծառայությունների հասանելիություն<br>Առողջապահական ծառայությունների որակ | 1/20 |

## Աղքատության շեմ

Մինչ այս նշել ենք, որ ԲԱԻ-ն հաշվելու համար համադրվում է երկու տեսակի տեղեկատվություն՝ հաճախականությունը (H) և ինտենսիվությունը (A): Հաճախականությունը հաշվարկելու համար, որը բազմաչափորեն աղքատ մարդկանց համամասնությունն է, պետք է սահմանել աղքատության շեմը (K): Չշփոթելու համար նշենք, որ այս շեմը տարբերվում է նախորդիվ նշված առանձին ցուցիչների շեմերից: Աղքատության շեմը վերաբերում է ցուցիչների այն համամասնությանը, որոնցում տնային տնտեսությունը զրկվածություն ունի՝ հետևաբար կարող է համարվել բազմաչափորեն աղքատ:

Եթե այս հետազոտության շրջանակներում տնային տնտեսության զրկանքի ցուցանիշը գերազանցել է 0.33-ը (կամ այն զրկված է եղել ցուցիչների 1/3ից ավելիում), այն համարվել է բազմաչափ իմաստով աղքատ: Սա նշանակում է, որ ընդհանուր թվով 26 ցուցիչից առնվազն 7-ում զրկված լինելու պարագայում տնային տնտեսությունը համարվել է բազմաչափորեն աղքատ: Այս շեմը նույնն է, ինչ այժմ օգտագործվում է ՕԱՄԶՆ կողմից՝ համաշխարհային ԲԱԻ-ի հաշվարկման գործընթացում[18]:

# • 3.2 Սահմանափակումներ

## Մեթոդաբանական սահմանափակումներ

ԱՖ մեթոն ունի մի շարք սահմանափակումներ, որոնք տեղին են նշել նաև այս հետազոտության շրջանակներում ԲԱԻ-ի հաշվարկ իրականացնելու ժամանակ: Ավելին՝ մի շարք մեթոդաբանական մարտահրավերներ ի հայտ են եկել ուսումնասիրության իրականացման փուլում: Այս մարտահրավերները պետք է հաշվի առնվեն Հայաստանում հետագա ԲԱԻ-ի առնչությամբ արվող աշխատանքներում: Չնայած ԱՖ մեթոդն ինտենսիվությունը չափում է՝ ըստ տնային տնտեսությունների կրած զրկանքների միջինացված պատկերի, այն չի ներկայացնում աղքատության խորությունը: Այլ կերպ ասած՝ մեթոդը հաշվի չի առնում, թե որքան կարող է լինել տնային տնտեսությունների հեռավորությունը յուրաքանչյուր ցուցիչով զրկանքի շեմից:

Որոշ ցուցիչներում զրկանքի հաճախականությունն անմիջականորեն կապված է եղել տնային տնտեսության ժողովրդագրական կազմի հետ: Օրինակ՝ բնակավայրի տեսակը՝ քաղաքային կամ գյուղական, հիմնովին պայմանավորել է Տրանսպորտային, Առողջապահական և Կրթական ծառայությունների հասանելիության տեսանկյունից զրկանք կրել-չկրելու հանգամանքը. այդ ցուցիչներով քաղաքային համայնքների տնային տնտեսությունները չեն համարվել զրկված:

Ինչ վերաբերում է Պատշաճ բնակարանային պայմանների ցուցիչին, ապա հաշվարկը համատեղում է անմիջականորեն կյանքի որակի վրա ազդող բնակարանային պայմանները և համայնքային միջավայրին առնչվող ընդհանուր պայմանները: Ավելին, դրանցից մի քանիսը միշտ չէ, որ տեղին են գյուղական համայնքների համար (օրինակ՝ ծանրաբեռնված երթևեկությունը, վերելակների գործարկումը, ընդհանուր տարածքների և բակերի սպասարկման ծառայությունները): Արդյունքում, այն տնային տնտեսությունները, որոնք խնդիրներ ունեն նման պայմանների ավելի քան մեկ երրորդի հետ՝ առանց մասնավորեցնելու ջեռուցման, տանիքի արտահոսքի, լուսավորության և վերելակների կամ ծանրաբեռնված երթևեկության հետ կապված խնդիրները, համարվել են զրկված:

Նույն նկատառումն առկա է Հանրային ծառայությունների որակի ցուցիչի հաշվարկում, որտեղ բանկային ծառայությունները կամ հասարակական տրանսպորտը (ինչը միշտ չէ, որ կարևոր հան-

18. Alkire, Sabina, Usha Kanagaratnam, and Nicolai Suppa. 2022. "A Methodological Note on the Global Multidimensional Poverty Index (MPI) 2022 Changes over Time Results for 84 Countries." Oxford. https://www.ophi.org.uk/wp-content/uploads/OPHI_MPI_MN_54_2022.pdf.

գամանք է գյուղական համայնքների համար) չափվում են ջրամատակարարման, աղբահանության կամ սանիտարական խնդիրների հետ համատեղ, որոնք կենսական նշանակություն ունեն առողջության և բարեկեցության համար: Ավելին, ցուցիչի համաձայն, տնային տնտեսությունները չեն դիտարկվում իբրև զրկված, եթե վերջիններս նշում են, որ ընդհանրապես հասանելիություն չունեն որևէ հանրային ծառայության: Հետևաբար, այս հարցում փոփոխվել է ցուցիչի հաշվարկը, որն այս զեկույցի շրջանակներում զրկված է համարում նաև այն տնային տնտեսություններին, որոնց հասանելի չէ հանրային ծառայությունների ավելի քան մեկ երրորդը:

Բացի այդ, աշխատանքի չափականության հաշվարկի համար մեթոդաբանությունն առաջարկում է Արժանապատիվ աշխատանքի և Թերզբաղվածության ցուցիչներում տնային տնտեսությանը համարել զրկված, եթե այն արդեն իսկ զրկված է Երկարաժամկետ գործազրկության կամ Աշխատաշուկային մասնակցության ցուցիչներում: Սա կարող է հանգեցնել այս չափականությունում զրկված տնային տնտեսությունների գերներկայացվածության և ազդել աշխատանքի չափականության ցուցիչների միջև համընկնման (collinearity) ցուցանիշի վրա: Հետևաբար, այս հետազոտության համար տվյալ ցուցիչներում զրկվածությունը հաշվարկվել է միայն դրանց առնչվող փոփոխականների հիման վրա:

Վերջապես, մեթոդաբանությունը Թերզբաղվածության ցուցիչով հաշվի է առնում զրկվածութունը՝ հիմնվելով միայն տնային տնտեսության ընտանիքի անդամի աշխատած ժամերի քանակի և աշխատանքի բնույթի վրա (սեզոնային կամ մշտական): Այնուամենայնիվ, թերզբաղվածություն տերմինն օգտագործվում է աշխատուժի, դրա հմտությունների, փորձի և ներգրավվածության իրացման տեսանկյունից[19]: Հետևաբար, ճշգրտումից հետո Թերզբաղվածության ցուցիչը ներառում է անհատի հմտությունների իրացման աստիճանի չափումը (զրկված են համարվում նաև նրանք, ում որակավորումները չեն համապատասխանում իրենց աշխատանքին):

## Տվյալների հավաքագրման սահմանափակումներ

Տվյալների հավաքագրման աշխատանքների ժամանակ առերեսվել ենք մի շարք մարտահրավերների, որոնք տվյալների որակի վրա կարող են ազդեցություն թողած լինել: Նախ, երկար և բարդ հարցաշարը պատասխանողների շրջանում հոգնածություն է առաջացրել՝ դժվարացնելով որոշ հարցերում մանրամասն տվյալներ վերհիշելու կամ երկար հաշվարկներ կատարելու գործընթացը, և հանգեցնելով որոշ թվային գրառումներում մոտարկված պատասխանների, ինչպես նաև վերհիշմամբ պայմանավորված շեղման:

Բացի այդ, ամբողջ տնային տնտեսության մասին տեղեկատվության հավաքագրումը մեկ անձից (չնայած նրա, որ ընտրվել է տնային տնտեսության մասին ամենատեղեկացված անդամը) ենթադրում է ամբողջ տնային տնտեսությանը վերաբերող հարցերի պատասխաններում որոշակի մոտարկումներ: Թեև հարցազրուցավարներին հանձնարարվել է ստուգել անորոշ տեղեկատվությունը՝ կապ հաստատելով ընտանիքի այլ անդամների հետ, հաճախ նրանք հասանելի չեն եղել կապի համար:

Մեկ այլ սահմանափակում առաջացել է այն պատճառով, որ որոշ հարցվողներ զերծ են մնացել իրենց ընտանիքի կազմի և կենցաղային մանրամասների մասին տեղեկություն տրամադրելուց՝ Սյունիքի շուրջ ստեղծված քաղաքական իրավիճակի[20] և դաշտային աշխատանքի պահին սահմանամերձ շրջաններում տիրող լարվածության պատճառով:

Տնային տնտեսությունների սպառման մասին տեղեկատվություն տրամադրելուց խուսափելու խնդիրը մասնավորապես առկա է եղել Կապանում: Ըստ այդմ, Կապանի տնային տնտեսությունը-

19. Տե՛ս https://corporatefinanceinstitute.com/resources/economics/underemployment/:
20. Տե՛ս https://evnreport.com/politics/the-meghri-corridor-a-viable-transport-link-or-geopolitical-noose/:

ները հակված են եղել թաքցնել իրենց սպառման մասին տեղեկատվությունը: Մեր հարցազրուցավարները նշել են, որ հարցազրույցների ընթացքում, հատկապես սպառման հետ կապված հարցերի դեպքում, տնային տնտեսության այլ անդամներ ևս ներկա են եղել՝ որոշակիորեն ազդելով հարցվողի պատասխանների վրա: Ավելին, տվյալադարանի այլ համապատասխան փոփոխականների խաչաձև ստուգումը նույնպես հուշում է, որ տնային տնտեսությունները ամբողջությամբ չեն ներկայացրել իրենց սպառումը: Դա հավանաբար պայմանավորում է Կապանում Ծայրահեղ պարենային աղքատության ցուցիչով աղքատների ավելի բարձր տոկոսը (տես 5.3 Արդյունքները ըստ ցուցանիշների. Հիմնարար կարիքներ. Ծայրահեղ պարենային աղքատություն):

## Օրագրին վերաբերող սահմանափակումներ

Տնային տնտեսությունների սպառումը չափելու համար ՀՌԿԿ-Հայաստանն այս հետազոտության շրջանակներում փորձարկել է սննդի սպառման օրագրի մեթոդը՝ ավելի ճշգրիտ տվյալներ ստանալու համար՝ մասնավորապես ընտրելով օրագրի լրացման 7-օրյա վերհիշման մեթոդը տնային տնտեսություններ մեկական այցելության միջոցով: Օրագիրը ստեղծվել է ԱՐՄՍՏԱՏ-ի՝ սպառման օրագրի հիման վրա: Համապարփակ տվյալների հավաքագրման համար կիրառվել են մի քանի մոտեցումներ.

- Օրագիրը փորձարկվել է 7 օր անընդմեջ՝ հարցազրույցներից հետո ամենօրյա հեռախոսազանգերի միջոցով,
- Օրագրի կետերը հարցվել են դեմ առ դեմ հարցազրույցների ժամանակ՝ 7-օրյա վերհիշման մեթոդի շրջանակներում տնային տնտեսություններ մեկ այցելության միջոցով, բաց հարցերի միջոցով (հարցման առաջին 6 օրվա ընթացքում):
- Այնուհետև օրագիրը լրացվել է փակ (ստանդարտացված) հարցերի միջոցով՝ ԱՐՄՍՏԱՏ-ի՝ սպառման օրագրի համաձայն:

Նշված բոլոր մոտեցումները հիմնականում այնքան էլ արդյունավետ չեն եղել, քանի որ հարցվողները զգալի դժվարություններ են ունեցել շաբաթական միջինացված ծախսերի և կոնկրետ ապրանքների սպառման հարցերին պատասխանելիս: Այս հարցերը ենթադրել են մտային ծանրաբեռնվածություն և հանգեցրել են մեծ թվով «դժվարանում եմ պատասխանել» տարբերակի և մոտարկված պատասխանների:

Ի պատասխան սրան՝ դաշտային աշխատանքների ավարտից հետո ՀՌԿԿ-Հայաստանը որոշել է հասցեագրել այս խնդիրները հետզանգերի միջոցով: Հարցվողների համար գործընթացը հեշտացնելու նպատակով բացակայող կամ թերի տվյալները լրացնելու համար օգտագործվել է Հայաստանում նվազագույն պարենային զամբյուղի ընդլայնված ցանկը[21]: Նախատեսված 230 դեպքից 135-ը հաջողությամբ լրացվել է հետզանգի միջոցով, մինչդեռ մյուս հարցվողները կա՛մ հասանելի չեն եղել զանգի միջոցով, կա՛մ մերժել են համագործակցել: Հետզանգեր իրականացնելիս հարցվողներից հավաքագրվել է միայն սպառված ապրանքների քանակի վերաբերյալ տեղեկատվություն[22]: Այնուհետև այս տեղեկատվությունը համակցվել է օրագրերի միջոցով հավաքված համապատասխան տեղեկատվության հետ: Այս տվյալներն օգտագործվել են նվազագույն պարենային զամբյուղից ցածր սպառում ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը հաշվարկելու համար:

Մեկ այլ սահմանափակում վերաբերում է ապրանքների սպառման քանակի չափմանը: Որոշ դեպքերում, օրինակ՝ ձկան, հացի և բանջարեղենի որոշ տեսակների (կաղամբ կամ սոխ) սպառումը

21. Տե՛ս https://armstat.am/file/article/sv_12_23a_6200.pdf:
22. Պետք է նկատի ունենալ, որ հետզանգերի ժամանակ հարցվողներին հարցրել են մրգի և բանջարեղենի կոնկրետ միավորների սպառման մասին (այն միավորների, որոնք առկա են նվազագույն զամբյուղի մեջ), մինչդեռ օրագրում այդ խմբերին անդրադարձը կատարվել է առանց հստակեցման:

հարցվողները կարողացել են նշել սպառած ապրանքի միավորով (հատ), մինչդեռ սպառման հաշվարկը հիմնված է քաշի վրա (կգ): Արդյունքում մենք մեկ միավորը վերածել ենք կիլոգրամի, հետևաբար մեկ տնային տնտեսության սպառման արժեքը կարող է շեղված լինել իրականից:

## Հաշվարկային սահմանափակումներ

Դաշտային աշխատանքների ընթացքում հավաքագրված 832 դիտարկումներից ՀՌԿԿ-Հայաստանը զտել է տվյալները՝ տվյալադարանից հեռացնելով 169 դիտարկում, որոնք չեն հաղթահարել ամբողջականության, ճշգրտության, վավերականության, կրկնելիության և հուսալիության առումներով մեր սահմանած որակի շեմերը: Արդյունքում, վերլուծության ճշգրտությունն ապահովելու համար ինդեքսի հաշվարկման համար օգտագործվել են 663 դիտարկումների տվյալները: Սա ենթադրել է որոշակի դժվարություն Կապանում ԲԱԻ-ի հաշվարկման ժամանակ, քանի որ համայնքում ուսումնասիրության ենթակա դեպքերի քանակը եղել է 158: Ընթերցողները պետք է հաշվի առնեն այս սահմանափակումը և դիտարկեն Կապանում գրանցված զրկվածության ցուցանիշը դրանում սահմանային սխալի հետ համատեղ, որը +/-8% է:

Սպառման բաժնում բացակայող արժեքներով բոլոր վավեր դիտարկումները համալրվել են՝ օգտագործելով ընդհանրացված գծային ռեգրեսիայի մոդելը: Այս մոդելն ընտրվել է շարունակական տվյալների (continuous data) ճկուն արտամոտարկում (extrapolation) ապահովելու համար, որտեղ բոլոր փոփոխականները կանխատեսվում են՝ ելնելով դրանց համապատասխան բաշխումից:

Մեկ այլ մարտահրավեր ի հայտ է եկել Կրթության և Առողջապահական հաստատությունների հասանելիության ցուցիչները հաշվարկելիս: Դրանք ենթադրում են համապատասխան հաստատություն հասնելու համար ծախսված ժամանակահատվածի հավաքագրում: Սակայն որոշ հարցվողներ դժվարացել են տալ այս հարցի ստույգ պատասխանը, ինչի արդյունքում հավաքագրվել են մեծ թվով «դժվարանում եմ պատասխանել» տարբերակներ: Այս անորոշ դեպքերը նույնպես արտամոտարկվել են՝ օգտագործելով միջին (այլ ոչ թե փաստացի) ժամանակը տնային տնտեսությունից տվյալ հաստատություն հասնելու համար: Քանի որ առկա տվյալները բավարար էին արտամոտարկման համար, վերջինս իրականացվել է այնպես, որ այդ դիտարկումները պատկերեն յուրաքանչյուր բնակավայրին բնորոշ տվյալների տատանումները, և չհանգեցնեն կոպիտ մոտարկումների:

Այդուհանդերձ, ոչ բոլոր «դժվարանում եմ պատասխանել» և «հրաժարվում եմ պատասխանել» տարբերակներն է հնարավոր եղել արտամոտարկել: Տվյալների մաքրման ժամանակ այս արժեքների քանակը բոլոր փոփոխականներում, որոնք անհրաժեշտ են ցուցիչների հաշվարկի համար, չի գերազանցել 20-ը (որը վարիացիոն շարքի 3%-ից ոչ ավելին է): Հետևաբար, մնացած բոլոր դեպքերը յուրաքանչյուր ցուցիչով զրկված չեն դիտարկվել:

# 4. ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տվյալների որակն ապահովելու համար մի շարք կայունության (robustness) թեստեր են անցկացվել Ալքայրի և այլոց կողմից[23] առաջարկված մեթոդներով: ԲԱԻ-ի համար մենք ստուգել ենք ցուցիչների ավելցուկները (redundancy), աղքատության շեմերի փոփոխության նկատմամբ զգայունությունը՝ օգտագործելով գերակայության (dominance) վերլուծություն և զույգ-զույգ (pairwise) համեմատություն: Մենք եզրակացնում ենք, որ ինդեքսը համարժեքորեն նախագծված է՝ հաշվի առնելով հաշվարկների մեթոդաբանական բարելավումը:

## • 4.1 Ավելցուկների վերլուծություն

ԲԱԻ-ի վավերականությունն ապահովելու համար կարևոր է գնահատել առանձին ցուցանիշների որակը: Ցուցանիշները պետք է ուղղված լինեն չափելու աղքատության համապատասխան (և տարբեր) կողմերը, որոնք որպես այդպիսին ցանկացած ԲԱԻ-ի կառուցման հիմքն են[24]:

Որպեսզի համընկնումներ չլինեն (օրինակ՝ երկու ցուցիչ ցույց չտան աղքատության նույն կողմը[25]), պետք է ստուգվեն ավելցուկները: Այդ նպատակով իրականացվել է Կրամերի V-ի կորելացիայի գործակիցների հաշվարկ յուրաքանչյուր զույգ ցուցանիշի համար: Գծապատկեր 1-ը ցույց է տալիս այդ գործակիցները: Եթե երկու ցուցանիշների միջև կորելացիան մեծ է, ապա մեծ է նաև հավանականությունը, որ այդ երկու ցուցիչները նույն երևույթն են չափում: Այնուամենայնիվ, կամայական երկու ցուցիչ, որոնք ունեն բարձր մակարդակի համընկնում, կարող են պահպանվել նորմատիվ հիմնավորումներով (այսինքն՝ եթե դրանք կարևոր են քաղաքականության մշակման առանձնահատկություններից ելնելով կամ փոփոխվում են ժամանակի ընթացքում)[26]:

23. Alkire, Sabina, James E. (James Eric) Foster, Suman Seth, Maria Emma Santos, José Manuel Roche, and Paola Ballón. 2015. Multidimensional Poverty Measurement and Analysis. First. Book, Whole. New York, NY: Oxford University Press. https://doi.org/10.1093/acprof:oso/9780199689491.001.0001., էջ 234:
24. Տե՛ս նույն տեղում, էջ 197:
25. Սա խնդիր կլիներ, քանի որ արհեստականորեն կմեծացներ աղքատության այդ ցուցիչի կշիռը ԲԱԻ-ում:
26. Տե՛ս նույն տեղում, էջ 229:

## Գծապատկեր 1. Կրամերի V-ի կորելացիաները

| | Կենտրոնացված ջրային համակարգ | Հանրային ծառայությունների որակ | Հասանելիություն հանրային տրանսպորտին | Հասանելիություն առողջապահական ծառայություններին | Առողջ ջեռուցում | Սանիտարական պայմաններ և աղբահանություն | Կրթության հասանելիություն | Տաք հոսող ջուր | Պարտադիր դպրոցական ուսուցում | Ծայրահեղ (սննդային) աղքատություն | Առողջապահական ծառայությունների մատչելիություն | Կրթության որակ | Բավարար բնակարանային պայմաններ | Առօրյա գործունեության դադարեցում | Երկարաժամկետ գործազրկություն | Մարդասիրական օգնություն | Կախվածություն դրամական փոխանցումներից | Տնային տնտեսությունը պատկանող ակտիվներ | Արժանապատիվ աշխատանք | Առողջապահական ծառայությունների որակ | Գերբնակեցում | Underemployment | Աշխատաշուկայի մասնակցություն | Միջնակարգ կրթություն | Արժանապատիվ կյանք |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հանրային ծառայությունների որակ | 0.51 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Հասանելիություն հանրային տրանսպորտին | 0.18 | 0.28 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Հասանելիություն առողջապահական ծառայություններին | 0.22 | 0.30 | 0.67 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Առողջ ջեռուցում | 0.21 | 0.27 | 0.48 | 0.56 | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Սանիտարական պայմաններ և աղբահանություն | 0.34 | 0.39 | 0.34 | 0.42 | 0.40 | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Կրթության հասանելիություն | 0.00 | 0.02 | 0.15 | 0.17 | 0.15 | 0.03 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Տաք հոսող ջուր | 0.34 | 0.26 | 0.14 | 0.17 | 0.15 | 0.34 | 0.02 | | | | | | | | | | | | | | | | | | |
| Պարտադիր դպրոցական ուսուցում | 0.12 | 0.14 | 0.05 | 0.10 | 0.05 | 0.06 | 0.00 | 0.06 | | | | | | | | | | | | | | | | | |
| Ծայրահեղ (սննդային) աղքատություն | 0.09 | 0.12 | 0.24 | 0.23 | 0.15 | 0.20 | 0.07 | 0.18 | 0.06 | | | | | | | | | | | | | | | | |
| Առողջապահական ծառայությունների մատչելիություն | 0.01 | 0.02 | 0.13 | 0.14 | 0.13 | 0.15 | 0.07 | 0.05 | 0.02 | 0.04 | | | | | | | | | | | | | | | |
| Կրթության որակ | 0.04 | 0.12 | 0.04 | 0.05 | 0.06 | 0.03 | 0.00 | 0.02 | 0.02 | 0.09 | 0.01 | | | | | | | | | | | | | | |
| Բավարար բնակարանային պայմաններ | 0.10 | 0.19 | 0.11 | 0.18 | 0.19 | 0.26 | 0.05 | 0.14 | 0.01 | 0.06 | 0.10 | 0.12 | | | | | | | | | | | | | |
| Առօրյա գործունեության դադարեցում | 0.08 | 0.08 | 0.07 | 0.04 | 0.04 | 0.03 | 0.06 | 0.04 | 0.08 | 0.02 | 0.00 | 0.04 | 0.08 | | | | | | | | | | | | |
| Երկարաժամկետ գործազրկություն | 0.08 | 0.08 | 0.04 | 0.00 | 0.12 | 0.07 | 0.11 | 0.09 | 0.04 | 0.13 | 0.01 | 0.04 | 0.00 | 0.01 | | | | | | | | | | | |
| Կենցաղային պայմանների սուբյեկտիվ ընկալում | 0.03 | 0.07 | 0.11 | 0.14 | 0.21 | 0.25 | 0.02 | 0.18 | 0.01 | 0.06 | 0.12 | 0.00 | 0.43 | 0.01 | 0.08 | | | | | | | | | | |
| Կախվածություն դրամական փոխանցումներից | 0.02 | 0.03 | 0.05 | 0.06 | 0.03 | 0.04 | 0.01 | 0.01 | 0.01 | 0.10 | 0.04 | 0.05 | 0.05 | 0.09 | 0.03 | 0.01 | | | | | | | | | |
| Մարդասիրական օգնություն | 0.03 | 0.09 | 0.12 | 0.10 | 0.17 | 0.18 | 0.01 | 0.21 | 0.01 | 0.09 | 0.10 | 0.03 | 0.22 | 0.11 | 0.01 | 0.31 | 0.06 | | | | | | | | |
| Արժանապատիվ աշխատանք | 0.05 | 0.03 | 0.01 | 0.03 | 0.01 | 0.05 | 0.03 | 0.06 | 0.02 | 0.07 | 0.02 | 0.05 | 0.05 | 0.13 | 0.01 | 0.06 | 0.02 | 0.03 | | | | | | | |
| Առողջապահական ծառայությունների որակ | 0.02 | 0.05 | 0.05 | 0.05 | 0.06 | 0.02 | 0.02 | 0.02 | 0.03 | 0.02 | 0.01 | 0.01 | 0.07 | 0.06 | 0.05 | 0.13 | 0.01 | 0.09 | 0.02 | | | | | | |
| Գերբնակեցում | 0.06 | 0.02 | 0.07 | 0.05 | 0.03 | 0.06 | 0.01 | 0.03 | 0.06 | 0.30 | 0.06 | 0.07 | 0.08 | 0.05 | 0.07 | 0.09 | 0.16 | 0.09 | 0.02 | 0.01 | | | | | |
| Underemployment | 0.08 | 0.04 | 0.02 | 0.05 | 0.01 | 0.00 | 0.01 | 0.06 | 0.05 | 0.03 | 0.03 | 0.01 | 0.04 | 0.07 | 0.07 | 0.06 | 0.01 | 0.05 | 0.22 | 0.02 | 0.10 | | | | |
| Աշխատաշուկային մասնակցություն | 0.02 | 0.02 | 0.07 | 0.04 | 0.06 | 0.04 | 0.05 | 0.02 | 0.05 | 0.19 | 0.03 | 0.03 | 0.00 | 0.05 | 0.14 | 0.06 | 0.02 | 0.07 | 0.06 | 0.06 | 0.14 | 0.15 | | | |
| Միջնակարգ կրթություն | 0.01 | 0.12 | 0.02 | 0.02 | 0.02 | 0.05 | 0.02 | 0.06 | 0.01 | 0.06 | 0.01 | 0.01 | 0.09 | 0.01 | 0.05 | 0.11 | 0.01 | 0.10 | 0.03 | 0.05 | 0.04 | 0.02 | 0.02 | | |
| Արժանապատիվ կյանք | 0.05 | 0.02 | 0.06 | 0.06 | 0.15 | 0.09 | 0.05 | 0.04 | 0.06 | 0.13 | 0.08 | 0.01 | 0.16 | 0.03 | 0.12 | 0.25 | 0.06 | 0.24 | 0.02 | 0.10 | 0.10 | 0.04 | 0.14 | 0.14 | |
| Մարդասիրական օգնություն | 0.02 | 0.01 | 0.01 | 0.04 | 0.06 | 0.03 | 0.01 | 0.09 | 0.09 | 0.03 | 0.08 | 0.06 | 0.11 | 0.02 | 0.03 | 0.15 | 0.01 | 0.16 | 0.04 | 0.04 | 0.16 | 0.03 | 0.04 | 0.10 | 0.22 |

Գծապատկեր 1-ը ցույց է տալիս, որ մեր ցուցիչների մեծ մասը փոխկապակցված չեն: Սա նշանակում է, որ X ցուցիչով զրկված անհատը քիչ հավանականությամբ զրկված կլինի այլ՝ Y ցուցիչով ևս: Այնուամենայնիվ, որոշ բացառություններ կարող են հայտնաբերվել՝ շատ դեպքերում կորելյացիան կարող ա կախված լինել աղքատության մի քանի չափանիշներից: Օրինակ, կորելացված են Սուբյեկտիվ բնակարանային պայմանները և Բավարար բնակարանային պայմանների ցուցիչները: Ակնկալվում է, որ բնակարանային օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանները փոխկապակցված են, սակայն մենք պնդում ենք, որ դրանք տարբեր հասկացություններ են և պետք է առանձնացված լինեն:

Այլ ցուցիչներ ևս փոխկապակցված են, սակայն համընկնումը կարող է բացատրվել դրանց համար ընտրված սահմանմամբ և շեմերով: Լավ օրինակ է նաև Առողջապահական ծառայությունների հա-

սանելիություն և Տրանսպորտի հասանելիություն ցուցիչների զույգը: Անձը համարվում է զրկված առողջապահական հաստատություններին հասանելիությունից, եթե նա գտնվում է համապատասխան հաստատություններից 20 րոպեից ավելի հեռավորության վրա: Հավանական է, որ տրանսպորտային ծառայություններից զրկված տնային տնտեսությունը, որը գտնվում է հեռու բժշկական հաստատություններից, զրկված է նաև առողջապահական ծառայությունների հասանելիությունից, քանի որ այդ ծառայությունները սովորաբար գտնվում են քաղաքային բնակավայրերում: Հանրային ծառայությունների որակն ու կենտրոնացված ջրամատակարարման համակարգերը նույնպես կարող են փոխկապակցված լինել, քանի որ հանրային ծառայություններին վերաբերող ցուցիչների հաշվարկի մեջ ներառված են նաև ջրահեռացումն ու ջրամատակարարումը: Սակայն, հարկ է նշել, որ որևէ չափականության մաս համարվող ցուցիչներ իրար հետ փոխկապակցված չեն 0.51-ից ավել գործակցով: Այսպիսով, մենք փաստում ենք, որ կիրառված ցուցիչները արտացոլում են չափականությունների տարբերություններն ու եզակիությունը:

## • 4.2 Գերակայության վերլուծություն

Նախքան վերլուծելը զրկվածության միավորների՝ շեմի արժեքի (K) փոփոխության նկատմամբ զգայունությունը, ներկայացնենք համայնքներում զրկվածության միավորների բաշխումը՝ ստուգելու համար շեղությունը և տարբերությունները համայնքներում: Գծապատկեր 2-ը հուշում է, որ զրկվածության ցուցանիշները մոտ են նորմալ բաշխմանը գյուղական համայնքներում: Բաշխումը մի փոքր ավելի շեղված է քաղաքային համայնքներում և զգալիորեն շեղված է Կապանում, որտեղ տնային տնտեսությունների ավելի մեծ մասնաբաժինն ունի զրկվածության ցածր ցուցանիշ (0-0.1):

**Գծապատկեր 2. «Աղքատության ինտենսիվություն», բաշխում ըստ համայնքների**




Զրկվածության ցուցանիշների կուտակային բաշխումը վերլուծելիս նկատում ենք, որ Սյունիքի գյուղական համայնքներում զրկված տնային տնտեսությունների համամասնությունն ավելի բարձր է, քան քաղաքային համայնքներում: Գծապատկեր 3-ի y առանցքը ներկայացնում է աղքատ համարվող տնային տնտեսությունների համամասնությունը, իսկ x առանցքը ցույց է տալիս զրկվածության ցուցանիշը: Այլ կերպ ասած՝ Գծապատկեր 3-ում ցուցադրված կորերի ցանկացած կետ ցույց է տալիս յուրաքանչյուր համայնքում տվյալ զրկանքի համար տնային տնտեսությունների համամասնությունը:

**Գծապատկեր 3. Զրկվածության ցուցանիշի կուտակային բաշխում, ըստ համայնքների**




## 4.3 Զույգ-զույգ համեմատություններ

Զույգ-զույգ համեմատություններ են կատարվել շեմերի տարբեր մակարդակների միջև՝ ամփոփելու կայունության վերլուծությունը՝ համայնքների դասակարգման ավելի հստակ ընկալմամբ: Համեմատությունները կառուցելու համար հաշվարկվել է յուրաքանչյուր համայնքի զրկվածության միջին ցուցանիշը և դուրսբերվել ցուցանիշների վստահության միջակայքերը՝ աղքատության համապատասխան շեմերի համար:

Զույգ-զույգ համեմատությունները կատարվել են մի քանի շեմերի համար. մենք ներկայացնում ենք միայն երեք շեմ՝ 0.2, 0.33 (մեր ընտրած ԲԱԻ-ն, որը համարվում է ելակետային տվյալ հետազոտության համար) և 0.4: Հատկապես այս շեմի ընտրության հիմնավորումը հետևյալն է. նախ, այդ արժեքները գտնվում են մեր ընտրած ԲԱԻ-ի շուրջ, և, հետևաբար, արդյունքների կայունության հիմնավորման համար նպատակահարմար է ուշադրություն դարձնել, թե արդյոք զգալի տարբերություններ են առաջանում այս շեմերը փոխատեղելիս:

Երկրորդ, գերակայության մեր վերլուծության մեջ կարելի է հետևողականորեն տարբերակել երեք խումբ՝ քաղաքային համայնքներ, Կապան և գյուղական համայնքներ: Հետևաբար, զույգ-զույգ համեմատությունները թույլ են տալիս մեզ իմանալ, թե այս համայնքներից որն իսկապես կարող է դասակարգվել վստահության որոշակի մակարդակով: Ի վերջո, {0.2:0.4} միջակայքից դուրս շեմ ընտրելիս՝ սկսած 0.5-ից, կարող ենք տեսնել, որ տնային տնտեսություններից ոչ մեկ զրկված չէ, քանի որ Սյունիքում զրկվածության մակարդակի ամենամեծ ցուցանիշը 0.49 է: Մյուս կողմից, այն դեպքերում երբ զրկվածության մակարդակը փոքր է 0.2-ից, մենք կարող ենք ունենալ գերներկայացուցչականություն, քանի որ մենք տնային տնտեսությունը զրկված ենք համարում ցուցիչների քիչ քանակով (3 կամ պակաս):

Գծապատկեր 4-ը ներկայացնում է արդյունքների կայունության տեսողական պատկերը աղքատության շեմերի փոփոխությունների նկատմամբ: Այն ցույց է տալիս, որ բազմաչափ աղքատների հաճախականությունը Կապանում հնարավոր չէ տարանջատել 0.33 և ավել աղքատության շեմերի դեպքում: Այլ քաղաքային բնակավայրերի արդյունքները մոտ են Կապանի արդյունքներին, սակայն զրկվածության մակարդակի համեմատաբար ավելի բարձր ցուցանիշ ունեն: Գյուղական համայնքներում զրկվածության մակարդակն ամենաբարձրն է (տես գծապատկեր 4):

## Գծապատկեր 4. Աղքատության մակարդակը. միջին արժեք և 95% վստահության միջակայք երեք շեմերի համար (K՝ ըստ համայնքի




**(ա) K= .2**




**(բ) K= .33**




**(գ) K= .4**

Գծապատկեր 4-ից երևում է, որ 0.33 ելակետային շեմ հաստատելը վերլուծության տեսանկյունից նպատակահարմար լուծում է: Դրա հիմնական պատճառն այն է, որ նման պայմաններում համայնքների մակարդակները հեշտությամբ հնարավոր է տարբերակել: Միևնույն ժամանակ, վստահության չհամընկնող միջակայքերը ենթադրում են արդյունքների հնարավոր վիճակագրական նշանակալիություն, ինչը հաստատում է ապագա եզրակացությունների կայունությունը: Այս համատեքստում վիճակագրական նշանակալիությունը ենթադրում է վերլուծության արդյունքների ոչ պատահականություն:

Համայնքների ցուցանիշների միջև տարբերությունը կարելի է դիտարկել որպես հարաբերական անորոշություն (կամ հարաբերական սխալ) գյուղական վայրերում բազմաչափ աղքատ անհատների փաստացի թվի հարցում Կապանի համեմատությամբ: Սա նշված տարածքներում աղքատության դեպքերի աճի հետևանքն է, որը ակնկալվող արդյունք է:

Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ գյուղական կամ քաղաքային համայնքների միջև հստակ դասակարգումն անհնար է: Եթե դրանք դասակարգվեին ըստ ներկայացված աղքատության շեմերի միջինների, այդ դասակարգումը լիովին այլ պատկեր ցույց կտար: Ուստի, ընթերցողները պետք է խուսափեն համայնքների միջև դասակարգումներից, քանի դեռ դրանց վստահության միջակայքերը չեն հատվում:

# 5. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Սույն բաժինը ներկայացնում է ՀՀ Սյունիքի մարզի ԲԱԻ-ն, ինչպես նաև յուրաքանչյուր չափականության և ցուցիչի ներդրումը վերջնական ԲԱԻ-ում: Յուրաքանչյուր ցուցիչի համար ներկայացված չափումը մատնանշում է խմբագրված ցուցիչների հարաբերակցությունը: Պարզ ասած՝ դա տվյալ ցուցիչով զրկված բազմաչափ աղքատ մարդկանց համամասնությունն է: Բոլոր թվերի համար արդյունքները բաժանված են համայնքային մակարդակով:

Սյունիքի մարզում զրկվածության վերլուծությունը ներառում է և՛ չափականության, և՛ խմբագրված (censored) ցուցիչների հաշվարկը՝ օգտագործելով կշռված տվյալները (տվյալները կշռվել են ըստ տնային տնտեսության չափի և բնակավայրի տեսակի, կշռման կարգը տե՛ս Հավելված Ա-ում. Կշռում): Կշռված տվյալների բազան բաղկացած է Սյունիքի 38,039 տնային տնտեսություններից, որոնց 66.7%-ը (25,369 տնային տնտեսություն) բնակվում է քաղաքային համայնքներում (9,814-ը՝ Կապանում և 15,555-ը՝ այլ քաղաքային բնակավայրերում), իսկ 33.3%-ը (12,670 տնային տնտեսություն)՝ գյուղական համայնքներում: Ընթերցողը պետք է նկատի ունենա, որ բոլոր հաշվարկներն այսուհետ կատարված են լինելու հենց այս կշռման հիման վրա, և բոլոր տոկոսները հաշվարկված են լինենելու վերը նշված թվերից:[27]

## 5.1 ԲԱԻ արդյունքներ

Սյունիքի մարզի ընդհանուր ԲԱԻ-ն որոշվում է զրկված տնային տնտեսությունների գործակիցով, որը ստացվում է խմբագրման (censoring) արդյունքում: Սա նշանակում է, որ որպես զրկված են դասակարգվում միայն այն տնային տնտեսությունները, որոնց զրկվածության մակարդակը գերազանցում է նշված շեմը՝ 0.33-ը (խմբագրված զրկվածության ցուցանիշ):

Սյունիքի մարզում խմբագրված զրկվածության ցուցանիշը կազմում է 4.6%: Գյուղական բնակավայրերում զրկվածության մակարդակը զգալիորեն բարձր է՝ ի համեմատ Կապանից բացի այլ քաղաքային բնակավայրերի՝ կազմելով 10.6%: Մինչդեռ քաղաքային համայնքներում տնային տնտեսությունների միայն 2.6%-ն է զրկված: Կապանում, այնուամենայնիվ, զրկվածության դեպքեր չկան[28] (տե՛ս Գծապատկեր 5), ինչը նշանակում է, որ տնային տնտեսություններից և ոչ մեկը չի գտնվում զրկվածության շեմից ցածր (ԲԱԻ-ում ներառված չափականությունների միայն մեկ երրորդն է):

27. Նկատի ունեցեք, որ 3%-ից պակաս տոկոսները զեկույցում չեն վիզուալացվել:
28. Խնդրում ենք նկատի ունենալ, որ տվյալների մաքրման ընթացակարգերից հետո որոշ դեպքեր բացառվել են հաշվարկից՝ անբավարար որակի պատճառով: Քանի որ ամենաշատ արձագանքները Կապանից էին, բնականաբար, վերացված պատասխանները նույնպես հիմնականում այս մարզից էին, ինչը Կապանի համար թողնում է սխալի +/- 8% միջակայք:

Հատկանշական է, որ, ըստ տվյալների, Գորիսն ավելի մեծ կշիռ ունի քաղաքային համայնքների զրկվածության ցուցանիշում, քան մյուս քաղաքները (բացառությամբ՝ Կապանի): Այսպես՝ Գորիսը ներառյալ՝ զրկվածության մակարդակը մարզում կազմում է 5.2%, իսկ Գորիսը հաշվարկից հանելու դեպքում այդ ցուցանիշը քաղաքային համայնքներում կրկնակի նվազում է: Նշենք, որ հետազոտության շրջանակում Սյունիքի համայնքներն ընդանքում ներկայացվել են ըստ համայնքային տիպի, հետևապես Գորիսը ներառվել է այլ քաղաքային բնակավայրերի ցանկում: Այսպիսով, ընթերցողը պետք է հաշվի առնի, որ Սյունիքի քաղաքային համայնքների զրկվածության մակարդակը հիմնականում պայմանավորված է Գորիսի զրկված տնային տնտեսությունների քանակով:

**Գծապատկեր 5. Զրկվածության խմբագրված ցուցանիշն՝ ըստ համանքի**




## • 5.2 Ներդրում

ԱՖ մեթոդի հետաքրքիր առանձնահատկությունը յուրաքանչյուր չափականության և ցուցիչի ներդրումը ԲԱԻ-ում տարբերակելն է: Ներդրում ասելով մենք նկատի ունենք ԲԱԻ-ի ցուցանիշի այն մասը (այսինքն՝ համամասնական չափը), որը կազմում է տվյալ ցուցիչների կամ չափականությունների ազդեցությունը: Այս ենթաբաժնում ներդրումը վերլուծվում է խմբագրված տնային տնտեսությունների համար՝ կազմելով մարզի ընդհանուր ԲԱԻ-ն:

Այնուամենայնիվ, համայնքային մակարդակում չափականությունների ներդրման աստիճանի մեջ առկա են տարբերություններ: Սյունիքի քաղաքային բնակավայրերում ընդհանուր ԲԱԻ-ի վրա առավելապես ազդում են հիմնարար կարիքները (ներդրման մասնաբաժինը՝ 27.2%), որին հաջորդում են առողջապահությունը (25%) և աշխատանքը (24%): Գյուղական բնակավայրերում ԲԱԻ-ի վրա հավասարապես ազդում են բնակարանային պայմաններ և առողջապահություն չափականությունները (յուրաքանչյուրը՝ 28.9% մասնաբաժինով), ապա հաջորդում է հիմնարար կարիքները՝ 23.6%-ով (տե՛ս Գծապատկեր 6): Այսպիսով, գյուղական համայնքներում աշխատանքի չափականությամբ զրկվածության ներդրումը կրկնակի պակաս է քաղաքային բնակավայրերից: Ավելին, գյուղական համայնքներում բնակարանային պայմաններ և առողջապահություն չափականություններն ավելի մեծ ներդրում ունեն, քան աշխատանքը, մինչդեռ քաղաքային բնակավայրերում այս երեք չափականությունները գրեթե հավասարապես են նպաստում:

### Գծապատկեր 6. Չափականությունների ներդրումն ըստ համայնքի




Հաջորդող ուսումնասիրությունը ներկայացնում է Սյունիքի քաղաքային համայնքներում ամենաշատ ներդրումն ունեցող երեք ցուցիչները՝ արժանապատիվ կյանքը, պարենային ծայրահեղ աղքատությունը և աշխատաշուկայում մասնակցությունը (տե՛ս Գծապատկեր 7): Սյունիքի գյուղական համայնքների համար ներկայացվում է առողջապահական ծառայությունների հասանելիություն, արժանապատիվ կյանք և առողջական խնդիրների պատճառով սովորական գործունեության դադարեցում ցուցիչների ներդրումը (տե՛ս Գծապատկեր 7): Քանի որ ընդհանուր ԲԱԻ-ն հիմնականում պայմանավորված է գյուղական համայնքների զրկվածության մակարդակով (որոնք մարզի ամենազրկվածներն են, տե՛ս Գծապատկեր 5), սա, ընդհանուր առմամբ, պատկերացում է տալիս, թե ինչպիսին է Սյունիքի մարզը:

## Գծապատկեր 7. Ցուցիչների ներդրումն ըստ համայնքի (%)

| Ցուցիչներ | Քաղաքային Սյունիքից | Գյուղական Սյունիքից | Ընդհանուր Սյունիքից |
|---|---|---|---|
| Ծայրահեղ (սննդային) աղքատություն | 12.7 | 6.1 | 7.6 |
| Արժանապատիվ կյանք | 12.7 | 9.5 | 10.2 |
| Մարդասիրական օգնություն | 1.8 | 8.0 | 6.6 |
| Կախվածություն դրամական փոխանցումներից | 0.0 | 0.0 | 0.0 |
| Կենցաղային պայմանների սուբյեկտիվ ընկալում | 3.0 | 2.2 | 2.4 |
| Բավարար բնակարանային պայմաններ | 2.9 | 2.3 | 2.4 |
| Գերբնակեցում | 2.3 | 3.1 | 2.9 |
| Առողջ ջեռուցում | 4.4 | 5.3 | 5.1 |
| Կենտրոնացված ջրային համակարգ | 0.0 | 1.2 | 0.9 |
| Սանիտարական պայմաններ և աղբահանություն | 1.2 | 2.9 | 2.6 |
| Տաք հոսող ջուր | 1.9 | 3.1 | 2.8 |
| Հանրային ծառայությունների որակ | 0.6 | 2.1 | 1.7 |
| Հասանելիություն հանրային տրանսպորտին | 0.0 | 3.3 | 2.6 |
| Տնային տնտեսությանը պատկանող ակտիվներ | 4.3 | 3.3 | 3.5 |
| Միջնակարգ կրթություն | 0.0 | 0.7 | 0.5 |
| Պարտադիր դպրոցական ուսուցում | 0.0 | 1.9 | 1.5 |
| Կրթության որակ | 3.3 | 3.1 | 3.2 |
| Կրթության հասանելիություն | 0.0 | 1.5 | 1.1 |
| Աշխատաշուկային մասնակցություն | 10.7 | 5.8 | 6.9 |
| Երկարաժամկետ գործազրկություն | 7.5 | 3.0 | 4.0 |
| Արժանապատիվ աշխատանք | 2.0 | 0.3 | 0.7 |
| Թերզբաղվածություն | 3.8 | 2.4 | 2.7 |
| Առողջապահական ծառայությունների մատչելիություն | 8.7 | 3.7 | 4.8 |
| Առօրյա գործունեության դադարեցում | 6.8 | 8.3 | 7.9 |
| Հասանելիություն առողջապահական ծառայություններին | 0.0 | 12.8 | 10.0 |
| Առողջապահական ծառայությունների որակ | 9.5 | 4.1 | 5.3 |

# • 5.3 Արդյունքներն ըստ ցուցիչների

Ընդհանուր ԲԱԻ-ի, ինչպես նաև չափականությունների ու ցուցիչների՝ համայնքներում զրկվածության մակարդակի մեջ ներդրումը վերլուծելուց հետո անհրաժեշտ է մանրամասն դիտարկել ցուցիչների մեծությունները: Այս մոտեցումն անհրաժեշտ է, քանի որ, չնայած Սյունիքի զրկվածության ընդհանուր ցածր մակարդակին՝ յուրաքանչյուր ցուցիչի ուսումնասիրությունը կարող է բացահայտել որոշակի ոլորտներ, որտեղ Սյունիքը զգալի մարտահրավերների է հանդիպում: Այս բավականին մանրամասն վերլուծությունը կարող է արժեքավոր պատկերացումներ տալ նպատակային քաղաքականության առաջարկությունների և միջամտությունների մշակման համար, որոնք ուղղակիորեն կարող են բարելավել Սյունիքի բնակչության բարեկեցությունը:

Վերլուծության յուրաքանչյուր ցուցիչի արդյունքները դիտարկվել են նախքան խմբագրումը: Այս մոտեցումը ապահովում է արդյունքների թափանցիկություն՝ խմբագրման ընթացակարգի պատճառով որևէ տվյալ բացառելուց խուսափելու նպատակով:

## **Հիմնարար կարիքներ.** Ծայրահեղ պարենային աղքատություն

Այս վերլուծության շրջանակներում տնային տնտեսությունը համարվում է զրկված, եթե չափահասի[29] սննդի սպառումը ցածր է պարենային աղքատության գծից (40,042 դրամ[30]): Կապանում և այլ քաղաքներում, ի համեմատ գյուղական բնակավայրերի, տնային տնտեսությունների պարենային նվազագույն զամբյուղում թվարկված սննդամթերքի ամսական սպառման տեսակարար կշիռը երկու անգամ ավելի ցածր է: Կապանում տնային տնտեսությունների մոտ կեսը զրկված է ծայրահեղ պարենային աղքատության ցուցիչով, իսկ Սյունիքի քաղաքային համայնքներում զրկվածության մակարդակը կազմում է 43.3%: Սյունիքի գյուղական համայնքներում զրկված է տնային տնտեսությունների 21.7%-ը[31] (տե՛ս Գծապատկեր 8):

**Գծապատկեր 8. Զրկվածության ցուցանիշն ըստ Ծայրահեղ պարենային աղքատության ցուցիչի**




29. Մեկ ընտանիքի չափահասների թիվը հաշվելու համար մինչև 6 տարեկան յուրաքանչյուր երեխա համարվել է 0.35 մեծահասակ, իսկ 6-ից մինչև 17 տարեկան յուրաքանչյուր դեռահաս՝ 0.65 մեծահասակ:
30. Նվազագույն պարենային զամբյուղի գինը կազմում է ամսական 41,026 դրամ մեկ անձի համար, սակայն, քանի որ տվյալադարանում լոբազգիների/ընդեղենի վերաբերյալ սպառումը բացակայել է, այն բացառվել է զամբյուղի հաշվարկից՝ թողնելով մեզ մեկ անձի համար ամսական 40,042 դրամ նվազագույն պարենային սպառում:
31. Պետք է հաշվի առնել, որ ծայրահեղ պարենային աղքատությունը չափելու համար հաշվարկում ներառված են միայն նվազագույն պարենային զամբյուղայի ապրանքները, ինչը ենթադրում է, որ հարցվողները կարող էին օգտագործել նաև այլ ապրանքներ (օրինակ՝ թռչնի միս՝ կարմիր մսի փոխարեն և այլն), որոնք չեն ներառվել հաշվարկում:

## Հիմնարար կարիքներ. Արժանապատիվ կյանք

Տնային տնտեսությունը համարվում է զրկված, եթե հարցվողը նշում է, որ գումարը բավարար չէ ամենօրյա սննդի կամ հագուստի համար: Նշված ցուցիչով զրկվածությունը որոշելու համար օգտագործվել է հարցման չորս հարցերի տվյալները՝ ներառելով (1) մեկ հարց, որն ուսումնասիրում էր սնվելու համար բավականաչափ կերակուր չունենալու անհանգստությունը և տնային տնտեսությունում սննդի պակասի պատճառով սոված մնալը, (2) մեկ հարց՝ կապված ամեն երկրորդ օրը միս ուտելու հնարավորության հետ, ինչպես նաև յուրաքանչյուր սեզոնի համար (3) հագուստ և (4) կոշիկ ունենալու հնարավորության հետ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ խնդիրը արդիական է Սյունիքի տնային տնտեսությունների մեկ երրորդի համար. քաղաքային բնակավայրերում՝ 32.1%, գյուղականում՝ 36.2%, իսկ Կապանում՝ 25.6% (տե՛ս Գծապատկեր 9):

**Գծապատկեր 9. Զրկվածության ցուցանիշն ըստ Արժանապատիվ կյանքի ցուցիչի**




## Հիմնարար կարիքներ. Մարդասիրական օգնություն

Այս ցուցիչով տնային տնտեսությունը համարվում է զրկված, եթե վերջին 12 ամիսների ընթացքում մարդասիրական օգնություն է ստացել: Վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքների զրկվածության մակարդակի միջև էական տարբերություն չկա. այն Սյունիքի քաղաքային համայնքներում կազմում է 16.7%, գյուղական համայնքներում՝ 18.7%, իսկ Կապանում՝ 12.3%:

## Հիմնարար կարիքներ. Կախվածություն դրամական փոխանցումներից

Թեև հիմնարար կարիքների չափականությունը նշանակալի ներդրում ունի համայնքներում տնային տնտեսությունների զրկվածության մակարդակի մեջ (տե՛ս Գծապատկեր 8), ըստ ցուցիչի ներդրման ավելի մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ դրամական փոխանցումներից կախվածությունն ամենաքիչ ազդեցությունն է ունենում տնային տնտեսությունների զրկվածության վրա. Սյունիքի տնային տնտեսությունների միայն 0.7% է զրկված ըստ այս ցուցիչի: Սա սպասելի է, քանի որ Սյունիքը համարվում է միգրացիոն պրոցեսներում ներգրավվածության ամենացածր մակարդակն ունեցող մարզերից մեկը:[32]

32. Տե՛ս https://armstat.am/file/article/demog_2023_7.pdf, էջ 132:

## **Բնակարանային պայմաններ.** Սուբյեկտիվ բնակարանային պայմաններ

Ըստ այս ցուցիչի՝ տնային տնտեսությունները համարվում են զրկված, եթե իրենց բնակարանային պայմանները բնութագրվում են որպես «վատ» կամ «շատ վատ»: Սուբյեկտիվ բնակարանային պայմանների ցուցիչով զրկված տնային տնտեսությունների տեսակարար կշիռը այլ քաղաքային բնակավայրերում գրեթե երկու անգամ ավելի բարձր է (15.1%), քան Կապանում (8.1%), մինչդեռ Սյունիքի գյուղական համայնքներում զրկված է տնային տնտեսությունների յուրաքանչյուր հինգերորդ (20.8%):

## **Բնակարանային պայմանների.** Պատշաճ բնակարանային պայմաններ

Գյուղական համայնքներում ապրող տնային տնտեսությունների մեկ քառորդից ավելին (27.1%) ըստ այս ցուցիչի զրկված է, ինչը նշանակում է, որ նրանց չի բավարարում իրենց բնակարանային պայմանների և անմիջական միջավայրի հետ կապված հետևյալ խնդիրների առնվազն մեկ երրորդը՝ մակերեսի սակավություն, հարևանների և շրջապատի աղմուկ, վատ լուսավորություն, ջեռուցման պակաս, խոնավություն, կաթող տանիք, քանդված պատեր և հատակ, քանդված փեղկեր և դռներ, ծանրաբեռնված երթևեկություն, արդյունաբերական աղտոտում, ջրամատակարարման և աղբահավաքման որակ, բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքների և բակի սպասարկում: Կապանում զրկված տնային տնտեսությունների տեսակարար կշիռը կազմում է մոտ 5.8%, մինչդեռ այն 18.1% է այլ քաղաքային բնակավայրերի տնային տնտեսությունների շրջանում (տե՛ս Գծապատկեր 10):

**Գծապատկեր 10. Զրկվածության ցուցանիշն ըստ Պատշաճ բնակարանային պայմանների ցուցիչի**




## **Բնակարանային պայմաններ.** Գերբնակեցում

Վերլուծությունը փաստում է, որ գերբնակեցումը գրեթե հավասարապես կարևոր է բոլոր համայնքների համար, սակայն զրկվածության մակարդակն, ընդհանուր առմամբ, 20%-ից պակաս է: Այս ցուցանիշը մի փոքր գերազանցում է միայն քաղաքային համայնքներում (բացառությամբ Կապանի)՝ կազմելով 21.8%: Այս ցուցիչով գյուղական համայնքներում զրկվածության տեսակարար կշիռը կազմում է 17.3%, իսկ Կապանում՝ 18.9% (տե՛ս Գծապատկեր 11):

### Գծապատկեր 11. Զրկվածության ցուցանիշն ըստ Գերբնակեցման ցուցիչի




## **Բնակարանային պայմաններ.** Առողջ ջեռուցում

Առողջ ջեռուցման ցուցիչն արտացոլում է բարձր բևեռացում՝ ցույց տալով Գյուղական համայնքներում տնային տնտեսությունների 86.4% զրկվածություն: Կենտրոնական ջեռուցման, էլեկտրականության կամ բնական և հեղուկ գազի փոխարեն գյուղական բնակավայրերում ստիպված են որպես ջեռուցման հիմնական աղբյուր օգտագործել նաֆթ, դիզել, փայտ կամ որևէ այլ աղբյուր (տե՛ս գծապատկեր 12):

### Գծապատկեր 12. Զրկվածության ցուցանիշն ըստ Առողջ ջեռուցման ցուցիչի




Թեև գյուղական համայնքներն առանձնանում են ոչ միայն այս, այլ նաև մյուս ցուցիչներով՝ բոլոր դեպքերում ունենալով զրկվածության ամենաբարձր մակարդակը, քաղաքային համայնքներում զրկվածների տեսակարար կշիռը նույնպես բարձր է (28.7%)՝ հատկապես, Կապանի հետ համեմատած ( 5% զրկված տնային տնտեսություն):

## **Բնակարանային պայմաններ.** Կենտրոնացված ջրամատակարարում

Կենտրոնացված ջրային համակարգը հասանելի է Սյունիքի տնային տնտեսությունների մեծ մասին: Մարզում զրկվածության մակարդակը կազմում է 7%. քաղաքային համայնքներում՝ 3%, իսկ Կապանում՝ 1.4%: Այստեղ միտումը նույնպես մնում է նույնը. Սյունիքի մյուս համայնքների համեմատ գյուղական բնակավայրերում կենտրոնացված ջրային համակարգի խնդիրն ավելի հաճախ է հանդիպում (16.3%):

## **Բնակարանային պայմաններ.** Կենտրոնացված ջրահեռացում և աղբահանություն

Կենտրոնացված ջրահեռացման (կոյուղու) հասանելիության կամ աղբահանության (աղբամուղով կամ բեռնատարով) հարցը խիստ է գյուղական տնային տնտեսությունների շրջանում. զրկված է տնային տնտեսությունների 35.8%-ը: Կապանում այս խնդիրը բացակայում է, իսկ մյուս քաղաքային համայնքներում զրկված է միայն տնային տնտեսությունների 3.9%-ը:

## **Բնակարանային պայմաններ.** Տաք հոսող ջուր

Սյունիքի մարզում տնային տնտեսությունների մեկ երրորդը զրկված է տաք հոսող ջրից, ինչը նշանակում է, որ նրանք տաք հոսող ջրին հասանելիություն չունեն. զրկված է գյուղական համայնքների տնային տնտեսությունների 43.8%-ը, իսկ քաղաքային համայնքներում և Կապանում զրկվածությունը նույնն է՝ 28% (տե՛ս. գծապատկեր 13):

**Գծապատկեր 13. Զրկվածության ցուցանիշն ըստ Տաք հոսող ջրի ցուցիչի**




Հաշվի առնելով առողջ ջեռուցման ցուցիչով զրկվածության բարձր մակարդակը (41.8% ողջ մարզում)՝ տաք հոսող ջրի բացակայությունը կարող է լինել կենտրոնացված ջրամատակարարման բացակայության և ջրի տաքացման համար անհրաժեշտ էներգիայի աղբյուրների, օրինակ՝ էլեկտրաէներգիայի կամ գազի սակավության հետևանք:

## **Բնակարանային պայմաններ.** Հանրային ծառայությունների որակ

Այս ցուցիչը չափում է տնային տնտեսությունների բավարարվածությունը ութ տարբեր հանրային ծառայություններից՝ ջրամատակարարում, ջրահեռացում, աղբահանություն, հեռախոս, էլեկտրաէներգիայի մատակարարում, փոստ, բանկային ծառայություններ և հասարակական տրանսպորտ: Այն տնային տնտեսությունները, որոնք բավարարված չեն հանրային ծառայությունների ավելի քան մեկ երրորդով կամ չունեն դրանց հասանելիություն, համարվում են զրկված: Այս խնդիրը արդիական է գյուղական համայնքների տնային տնտեսությունների մոտ մեկ հինգերորդի համար (22%): Այն ավելի քիչ է տարածված Սյունիքի քաղաքային համայնքներում (3.9%) և Կապանում (1.4%):

## **Բնակարանային պայմաններ.** Հասանելիություն տրանսպորտային ծառայություններին

Այս ցուցիչը հաշվարկվում է միայն գյուղական համայնքների տնային տնտեսությունների համար. քաղաքային համայնքների տնային տնտեսությունները չեն համարվում զրկված[33]: Ինչ վերաբերում է գյուղական համայնքներին, ապա զրկված է այս բնակավայրերի տնային տնտեսությունների երկու երրորդը (65.4%) (տե՛ս Գծապատկեր 14):

**Գծապատկեր 14. Զրկվածության ցուցանիշն ըստ Տրանսպորտային ծառայություններին հասանելիության ցուցիչի**




## **Բնակարանային պայմաններ.** Տնային տնտեսությանը պատկանող ակտիվները

Այս ցուցիչը նկարագրում է այն տնային տնտեսությունները, որոնք չունեն լրատվության սպառման որևէ միջոցներ (ռադիո, հեռուստացույց, համակարգիչ, ցանկացած տեսակի հեռախոս, պլանշետ), սննդի պատրաստման միջոցներ (վառարան, գազօջախ), սառնարան կամ կահույք: Այն տնային տնտեսությունը, որը չունի նշված յուրաքանչյուր միջոցներից գոնե մեկը, համարվում է զրկված: Վերլուծությունը ցույց է տալիս, որ գյուղական համայնքներում տնային տնտեսությունները համեմատաբար ավելի մեծ չափով են զրկված՝ գրանցելով 35.3% զրկվածություն: Քաղաքային համայնքներում զրկվածության մակարդակը կազմում է 29.6%, իսկ Կապանում՝ 17.4% (տե՛ս Գծապատկեր 15):

**Գծապատկեր 15. Զրկվածության ցուցանիշն ըստ Տնային տնտեսությանը պատկանող ակտիվների ցուցիչի**




33. Բացատրության համար տե՛ս Հավելված Բ:

## Կրթություն

Ինչպես ցույց է տվել չափականությունների ներդրման վերլուծությունը (տե՛ս Գծապատկեր 8)՝ կրթության չափականությունն ամենաքիչ ազդեցությունն ունի զրկվածության ընդհանուր մակարդակի վրա: Դա փաստում է նաև տնային տնտեսությունների զրկվածության վրա ազդեցության ուսումնասիրությունն ըստ ցուցիչի. ամբողջ մարզում կրթության հասանելիությունից զրկված է միայն տնային տնտեսությունների 2.1%-ը, որից 1.1%-ը՝ պարտադիր կրթությունից, 1.8%-ը՝ միջնակարգ կրթությունից, իսկ 6.3%-ը՝ կրթական ծառայությունների որակից: Այս չափականության այլ ցուցիչների համեմատ վերջինը միակն է, ըստ որի զրկված համարվող տնային տնտեսությունների թիվն ավելի մեծ է:

## Աշխատանք. Մասնակցություն աշխատաշուկայում

Աշխատաշուկայում մասնակցության ցուցիչը վերաբերում է այն տնային տնտեսություններին, որոնց աշխատանքային տարիքի (16-74) անձանց կեսից ավելին ներգրավված չէ աշխատաշուկայում (բացառությամբ՝ այն տնային տնտեսությունների, որոնք չունեն աշխատունակ տարիքի անդամներ): Սյունիքի մարզի տնային տնտեսությունների գրեթե մեկ երրորդը զրկված է աշխատաշուկայում մասնակցությունից. քաղաքային համայնքների՝ 29%-ը, գյուղականի՝ 36.7%-ը, իսկ Կապանի՝ 30.8%-ը (տե՛ս Գծապատկեր 16):

**Գծապատկեր 16. Զրկվածության ցուցանիշն ըստ Աշխատաշուկայում մասնակցության ցուցիչի**




## Աշխատանք. Երկարաժամկետ գործազրկություն

Թեև Սյունիքի մարզի տնային տնտեսությունների մեկ երրորդը զրկված է աշխատաշուկայում մասնակցությունից, երկարաժամկետ գործազրկությունից զրկված է միայն 10.1%-ը: Տնային տնտեսությունն այս ցուցիչով համարվում է զրկված, եթե աշխատունակ տարիքի անդամներից որևէ մեկը գործազուրկ է և ակտիվորեն աշխատանք է փնտրում մեկ կամ ավելի տարի: Այս ցուցիչով քաղաքային համայնքներում զրկվածության մակարդակն ավելի բարձր է (14.6%), քան գյուղական համայնքներում (8.7%), իսկ Կապանում խնդիրը վերաբերելի է տնային տնտեսությունների միայն 4.8%-ին (տե՛ս Գծապատկեր 17):

**Գծապատկեր 17. Զրկվածության ցուցանիշն ըստ Երկարաժամկետ գործազրկության ցուցիչի**




## **Աշխատանք.** Արժանապատիվ աշխատանք

Այս ցուցիչով տնային տնտեսությունները համարվում են զրկված, եթե բոլոր զբաղված անդամները կամ ինքնազբաղված են կամ մասնակցում են ընտանեկան բիզնեսին: Հաշվարկում հաշվի է առնվում անհատների ինչպես հիմնական, այնպես էլ երկրորդային աշխատանքը: Տվյալները փաստում են, որ այս ցուցիչով տնային տնտեսությունների շատ փոքր մասն է զրկված: Սա նշանակում է, որ մարզի տնային տնտեսությունների ճնշող մեծամասնությունում աշխատունակ տարիքի առնվազն մեկ անդամ ներգրավված չէ ընտանեկան բիզնեսում կամ ինքնազբաղված չէ: Այնուամենայնիվ, քաղաքային համայնքներում զրկվածության մակարդակն ավելի քան երկու անգամ բարձր է գյուղական համայնքներից (քաղաքայինում՝ 5.2%, իսկ գյուղականում՝ 2.2%), իսկ Կապանում այն հասնում է 2.4%-ի: Սա կարելի է բացատրել նախորդ ցուցիչի նմանատիպ միտումով:

## **Աշխատանք.** Թերզբաղվածություն

Տնային տնտեսությունները համարվում են զրկված, եթե բոլոր զբաղված անձինք կամ աշխատում են շաբաթական 30 ժամից պակաս (հիմնական և երկրորդային աշխատանքը գումարային, եթե կիրառելի է), համարվում են սեզոնային աշխատողներ կամ աշխատում են իրենց որակավորումից ցածր որակավորում պահանջող պաշտոնում: Այս խնդիրը զրկվածության ընդհանուր մակարդակի մեջ համեմատաբար ավելի քիչ ներդրում ունեցողների շարքում է, քանի որ բոլոր համայնքներում զրկվածության մակարդակը 20%-ից ցածր է. գրեթե հավասար մասնաբաժինով՝ Կապանում 11.5% է, գյուղական համայնքներում՝ 11.4%, իսկ քաղաքային համայնքներում՝ 17.8%:

## **Առողջապահություն.** Առողջապահական ծառայությունների մատչելիություն

Վերլուծությունը ցույց է տալիս, որ առողջապահական ծառայությունների մատչելիությունը Սյունիքում առաջնային խնդիր չէ, քանի որ ըստ այս ցուցիչի տնային տնտեսությունների միայն 7.1%-ն է զրկված. քաղաքային համայնքներում՝ 5.6%, գյուղական համայնքներում՝ 11%, իսկ Կապանում՝ 4.4%:

## **Առողջապահություն.** Առօրյա գործունեության դադարեցում

Ըստ որևէ առողջական խնդրի պատճառով սովորական գործունեության դադարեցման ցուցիչի՝ տնային տնտեսությունների մոտավորապես մեկ երրորդը (~32%) Սյունիքի մարզում զրկված է[34]: Թեև գյուղական համայնքներում զրկված տնային տնտեսությունների մասնաբաժինը ավելի մեծ է (35.3%), պատկերը համեմատաբար նույնական է համայնքային բոլոր տիպերում. 30.2%՝ քաղաքային համայնքներում և 30.3%՝ Կապանում (տե՛ս Գծապատկեր 18):

**Գծապատկեր 18. Զրկվածության ցուցանիշն ըստ Առօրյա գործունեության դադարեցման ցուցիչի**




## **Առողջապահություն.** Հասանելիություն առողջապահական ծառայություններին

Առողջապահական ծառայությունների հասանելիությունն ամենաբարձր ներդրումն ունի գյուղական համայնքների զրկվածության մակարդակի ցուցանիշի մեջ (12.8%) (տե՛ս Գծապատկեր 7): Հատկանշական է, որ Սյունիքում զրկված է տնային տնտեսությունների գրեթե մեկ քառորդը (26.3%): Կարևոր է նշել, որ գյուղական համայնքներում տնային տնտեսությունների 79%-ը զրկված է առողջապահական ծառայությունների հասանելիությունից (տես Գծապատկեր 19), իսկ նույն համայնքներում առողջապահական ծառայությունների մատչելիությունից զրկված է տնային տնտեսությունների միայն 11%-ը:

Քանի որ առողջապահական ծառայությունների հասանելիության ցուցիչը հաշվարկվում է միայն գյուղական համայնքների համար[35], նման պատկերին կարող է նպաստել մի քանի գործոն. այսպես՝ առողջապահական ծառայությունների հասանելիության և տրանսպորտի հասանելիության միջև համեմատաբար բարձր հարաբերակցությունը (տե՛ս Գծապատկեր 1) կարող է հուշել, որ չնայած տնային տնտեսություններն ունեն դրամական միջոցներ կամ պետական աջակցություն առողջապահական հաստատություններ հաճախելու համար, այնուամենայնիվ, տրանսպորտի հասանելիությունը (ըստ որի գյուղական համայնքներում զրկված է տնային տնտեսությունների 65.4%-ը), զուգակցված գյուղական համայնքների և առողջապահական

34. Ընթերցողը պետք է հաշվի առնի, որ հարցադրումը ճշգրտել է տնային տնտեսության անդամներից որևէ մեկի բացակայությունը իր սովորական գործունեությունից վերջին 12 ամիսների ընթացքում: Քանի որ հարցադրման ժամանակահատվածը երկար է, այն կարող է հանգեցնել ցուցիչում զրկվածության ավելի բարձր ցուցանիշների:
35. Բացատրության համար տե՛ս Հավելված Բ:

հաստատությունների[36] միջև եղած հեռավորության հետ, կարող է այս ցուցիչով զրկվածության զգալի պատճառ դառնալ:

**Գծապատկեր 19. Զրկվածության ցուցանիշն ըստ Առողջապահական ծառայությունների հասանելիության ցուցիչի**




## **Առողջապահություն.** Առողջապահական ծառայությունների որակ

Առողջապահական ծառայությունների որակի ցուցիչը վերաբերում է այն տնային տնտեսություններին, որոնք գոհ չեն առողջապահական ծառայություններից կամ նշել են, որ դրանց հասանելիություն չունեն: Ըստ այդմ, սույն ցոցիչով Սյունիքում զրկված է տնային տնտեսությունների 14.9%-ը. քաղաքային համայնքներում՝ տնային տնտեսությունների 18%-ը, գյուղական համայնքներում՝ 16.3%-ը, իսկ Կապանում՝ 8.3%-ը:

36. Ըստ հավաքագրված տվյալների՝ գյուղական համայնքներից մինչև մոտակա հիվանդանոց միջին հեռավորությունը 28 րոպե է, մինչև մոտակա դեղատուն՝ 26 րոպե (երկու վարիացիոն շարքերի առավելագույն արժեքը 90 րոպե է, այն դեպքում, երբ 20 րոպեից ավել ժամանակահատվածը յուրաքանչյուր տնային տնտեսության համար համարվում է զրկվածություն), և միայն մինչև Շտապօգնության մոտակա ծառայություն հասնելն է տևում 11 րոպե, քանի որ այն սովորաբար հատկացվում է յուրաքանչյուր գյուղական համայնքին՝ առաջին օգնության ցուցաբերման համար:

# 6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս ուսումնասիրությունն առաջարկում է բազմաչափ աղքատության ինդեքսի մանրամասն վերլուծություն ՀՀ Սյունիքի մարզում՝ բացահայտելով զրկանքների զգալի տարբերությունները քաղաքային և գյուղական համայնքներում: ՀՌԿԿ-Հայաստանի կողմից իրականացված այս ուսումնասիրությունը տրամադրում է Սյունիքի մարզում բազմաչափ աղքատության համապարփակ վերլուծություն՝ կենտրոնանալով աղքատության չափման ոչ դրամային ասպեկտների վրա: Վերլուծելով 663 տնային տնտեսությունների տվյալներ Ալքայր-Ֆոսթերի մեթոդով՝ հետազոտությունն ուսումնասիրում է աղքատության հինգ չափականություններ՝ հիմնարար կարիքներ, բնակարանային պայմաններ, կրթություն, աշխատանք և առողջապահություն:

Որդեգրելով համայնքային մակարդակի վերլուծական մոտեցում և կշռելով տվյալները՝ հետազոտությունը տալիս է յուրահատուկ նրբերանգային պատկերացում Սյունիքում առկա աղքատության դրսևորումների վերաբերյալ: Տվյալները, որոնք ներկայացվում են այս և հետագայում բազմաչափ աղքատությունը քննող հետազոտությունների միջոցով, կարող են հիմք դառնալ աղքատության նվազեցման նպատակային քաղաքականության և ծրագրերի համար, հատկապես եթե դրանք վերաբերում են առանձին համայնքներին բնորոշ զրկանքներին: Յուրաքանչյուր համայնքի կոնկրետ համատեքստի վերլուծությունը կարող է թույլ տալ իրականացնել ավելի համապատասխան միջամտություններ: «Համայնքային աղքատության հաղթահարում. կիրառական մոտեցումներ» ծրագրի շրջանակներում Շիրակում, Լոռիում և Տավուշում իրականացված նմանատիպ ուսումնասիրությանը զուգահեռ, այս բացահայտումները միտված են աջակցելու Սյունիքում բազմաչափ աղքատության և խոցելիության դեմ պայքարելուն ուղղվող համատեղ ջանքերին՝ ՔՀԿ-ների, ՏԻՄ-երի և համայնքի անդամների միջև: Ինչպես այս հետազոտությունը, այնպես էլ համայնքային մակարդակով իրականացվող հետագա ուսումնասիրություններն, այսպիսով, կարող են ամուր հիմք ստեղծել Հայաստանում աղքատության կրճատմանն ուղղված մոտեցումներում:

Հետազոտության բացահայտումները քննում են Սյունիքում աղքատության բազմաչափ բնույթը՝ հատկապես ընդգծելով այն հանգամանքը, որ աղքատությունը միայն եկամտով չէ պայմանավորված, այլ ներառում է նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են անբավարար բնակարանային պայմանները, որակյալ սոցիալական ծառայություններին հասանելիությունը, առողջապահական խնդիրները, ինչպես նաև աշխատաշուկայի հետ կապված զրկանքները:

Ընդհանուր ԲԱԻ-ն Սյունիքի մարզի համար կազմում է 4.6%: Անկախ սրան, զրկվածության աստիճանն զգալիորեն ավելի բարձր է գյուղական համայնքներում՝ ի տարբերություն քաղաքայինների, և կենսամակարդակը Գորիսում առանձնակիորեն պայմանավորում է քաղաքային համայնքներում զրկանքների ցուցանիշը, այնինչ, Կապանի որևէ տնային տնտեսություն չի գտնվում զրկվածութ-

յան շեմից ներքև: Քաղաքային համայնքներում ԲԱԻ-ն հիմնականում ձևավորվում է հիմնարար կարիքների, առողջապահության և աշխատանքի չափականությունների միջոցով, իսկ գյուղական համայնքներում՝ առաջին հերթին բնակարանային պայմանների ու առողջապահության, և հետո միայն՝ հիմնարար կարիքների:

Ծայրահեղ պարենային աղքատությունն ակնհայտ է. այն ազդում է Կապանի տնային տնտեսությունների գրեթե կեսի, մարզի քաղաքային համայնքների՝ 43.3%-ի, իսկ գյուղական համայքների՝ միայն 21.7%-ի վրա: Արժանապատիվ կյանքը ևս դժվար հասանելի բարիք է, որի հարցում Սյունիքի տնային տնտեսությունների գրեթե մեկ երրորդը զրկանքներ ունի: Ի տարբերություն սրանց՝ դրամական փոխանցումներից կախվածությունը հարաբերականորեն պակաս խնդրահարույց է՝ ազդելով միայն 0.7% տնային տնտեսությունների վրա:

Բնակարանային պայմաններից զրկվածությունն առավել հստակ է երևում գյուղական բնակավայրերում, որտեղ տնային տնտեսությունների 20.8%-ը սուբյեկտիվ բնակարանային պայմանների անբավարարության խնդիր ունի, իսկ 27.1%-ը չունի համապատասխան բնակարան: Առողջ ջեռուցումը գյուղական վայրերում ցայտուն զրկանք է, որտեղ տնային տնտեսությունների 86.4%-ը ջեռուցման առավել բարենպաստ լուծումների կարիք ունի:

Մարզում կրթության չափականությունն ամենաքիչն է պայմանավորում ընդհանուր զրկանքները, ընդ որում, ամենաշատն աչքի ընկնող ցուցանիշը կրթական ծառայությունների որակն է, որն ազդում է տնային տնտեսությունների 6.3%-ի վրա:

Աշխատաշուկային մասնակցության ցուցիչը մատնանշում է զրկվածության բարձր մակարդակ հատկապես գյուղական բնակավայրերում (36.7%), մինչդեռ երկարաժամկետ գործազրկությունն ավելի էական խնդիր է քաղաքային բնակավայրերում (14.6%): Արժանապատիվ աշխատանքի և թերզբաղվածության համար զրկվածության մակարդակն ավելի ցածր է, սակայն՝ նկատելի՝ հատկապես քաղաքային բնակավայրերի դեպքում:

Անդրադառնալով առողջապահության հարցին՝ առողջապահական ծառայությունների մատչելիությունը մարզում ընդգծված խնդիր չէ: Այս առումով, էական մարտահրավերը առողջապահական ծառայությունների հասանելիությունն է գյուղական բնակավայրերում, որտեղ տնային տնտեսությունների 79%-ը զրկված է այս ցուցիչով:

Ամփոփելով, կարևոր է նշել, որ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սյունիքի մարզում գյուղական բնակավայրերը բախվում են բազմաչափ աղքատության ավելի մեծ մասշտաբների, ինչն անհրաժեշտություն է ստեղծում, որպեսզի տեղական կարիքների ուղղությամբ նպատակային միջամտություններ կատարվեն: Այս զեկույցն արժեքավոր հենակետ է Սյունիքի մյուս համայնքների զարգացման քաղաքականությունների համար, որոնք, չնայած ԲԱԻ-ի հարաբերականորեն ցածր ցուցանիշին, բարեկեցության կենսական ասպեկտներում դեռևս շարունակում են բախվել զգալի մարտահրավերների:

# 7. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Նախքան զեկույցում շարադրված առաջարկություններին անդրադառնալը՝ պետք է հաշվի առնել դրանց վերաբերյալ որոշակի նկատառումներ: Այս զեկույցի նպատակը Սյունիքի մարզում աղքատության մասին նարատիվ ստեղծելը չէ: Մենք չենք պնդում, որ որևէ հարթություն էականորեն պակաս կարևոր է, քան մյուսները: Այս բաժինը նպատակ ունի մատնանշել հնարավոր ուղիներ, որոնց ուղղությամբ կենտրոնացված ջանքերը կարող են հանգեցնել աղքատության դեմ պայքարի արդյունավետ ռազմավարությունների:

Հաշվի առնելով սա՝ մենք ներկայացնում ենք մի քանի դիտարկում, որոնք կարող են անհրաժեշտ լինել առավել նպատակային քաղաքականության միջամտությունների համար՝ առաջնորդվելով բացառապես մեր հետազոտության տվյալների վերլուծությունից դուրս բերված բացահայտումներով:

## Հիմնարար կարիքներ

Հիմնարար կարիքները հոգալու համար տնային տնտեսությունների դժվարությունները համատարած են: Սյունիքի տնային տնտեսությունների մոտ 38%-ը զրկված է ծայրահեղ պարենային աղքատության ցուցիչով: Հատկանշական է, որ տնային տնտեսությունների 53.8%-ը նշում է, որ ամեն երկրորդ օրը չի կարողանում միս, հավ կամ ձուկ (կամ բուսակերական փոխարինիչներ) ուտել, իսկ որոշ տնային տնտեսություններ դժվարանում են իրենց թույլ տալ յուրաքանչյուր սեզոնի համար անհրաժեշտ կոշիկ (23.9%) և հագուստ (26.4%) գնել: Չնայած այս խնդիրներին՝ բնակչության մեծ մասը հաշվառված չէ աղքատության նպաստների համակարգում (հաշվառված է տնային տնտեսությունների միայն 11.6%-ը) կամ չունի աջակցության որևէ այլ միջոց (ունի միայն 8.3%-ը):

Կոշիկի և հագուստի մատչելիության տեսանկյունից կարելի է առաջարկել շրջանաձև տնտեսության վերաբերյալ իրազեկման արշավ, ինչը կարող է խթանել առկա նյութերի փոխանակման, վերաօգտագործման, վերանորոգման և վերամշակման գաղափարը՝ դառնալով հագուստ և կոշիկ ձեռք բերելու կայուն միջոց: Սյունիքում պարենային բանկերի համակարգի խթանումը կարող է սնունդը մատչելի դարձնել աղքատությունից տուժողների համար. դա կարող է իրականանալի լինել մասնավորապես սննդի վաուչերային համակարգ ստեղծելու միջոցով:

Այս խնդիրները հնարավոր է հասցեագրել ԵՄ կողմից իրականացվող «Դիմակայուն Սյունիք» ծրագրի սոցիալական ծառայությունների ճյուղի միջոցով: Նման զարգացումները խթանող ծրագրի օրինակ է ՊՀԾ-ի կողմից իրականացվող «Հայաստանի սահմանամերձ համայնքների դիմակայու-

նության ամրապնդում և տնտեսական վերականգնում» ծրագիրը, որի հիմնական նպատակներից մեկը պարենային անապահովության և թերսնման վերացումն է[37]: Տարբեր գործընկերների կողմից նման նախաձեռնությունների միջև հնարավոր համագործակցությունը կարող է էլ ավելի օգտակար դարձնել այդ նախաձեռնությունները:

## Բնակարանային պայմաններ

Առողջ ջեռուցումը (զրկվածության ցուցանիշը գյուղական համայքներում՝ 86.4%-ը), տրանսպորտի հասանելիությունը (գյուղական համայնքներում զրկվածությունը՝ 65.4%) և տաք հոսող ջրի հասանելիությունը (գյուղական համայնքներում զրկվածությունը՝ 40.8%-ը) բնակարանային պայմաններին վերաբերող այն երեք ամենակենտրոնական խնդիրներից են, որոնց արժե առաջնահերթություն տալ Սյունիքում, հատկապես՝ գյուղական համայնքներում:

Առողջ ջեռուցման և տաք ջրամատակարարման հիմնախնդիրների լուծման հնարավոր ուղիներից է արևային վահանակներ ձեռք բերելու համար քաղաքացիներին սուբսիդավորման ծրագրեր առաջարկելը կամ երկարաժամկետ վարկեր տրամադրելը (խմբային գնումների, կանաչ ֆինանսավորման կամ քրաուդֆանդինգի միջոցով):

Խնդրին կարող է անդրադառնալ նաև ԵՄ «Դիմակայուն Սյունիք» ծրագրի Կայուն կանաչ հանրային ենթակառուցվածքների ճյուղը: Ծրագրերի այլ օրինակներ, որոնք կարող են հասցեագրել առողջ ջեռուցման, այդ թվում՝ տաք հոսող ջրի հիմնախնդիրները, ներառում են.

- Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «ԵՄ-ն հանուն Հայաստանի համայնքներում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի» ծրագիրը, որի ակնկալվող արդյունքներից մեկն է խթանել խոցելի, ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների շրջանում ամուր կենսազանգվածի վրա հիմնված և տեղական արտադրության էներգաարդյունավետ վառարանների օգտագործումը[38]:
- Ազգային հիփոթեքային ընկերության և ՀՖԳ-ի կողմից իրականացվող «Ջերմ օջախ» էներգաարդյունավետության բարելավմանն ուղղված ծրագիրը, որը նպատակ ունի հնարավորություն ստեղծել ցածր և միջին եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համար վերանորոգելու իրենց բնակարանները և առանձնատները, ստեղծելու հարմարավետ կյանք, նվազեցնելու բնակարանային էներգիայի ծախսերը, ինչպես նաև նպաստելու Հայաստանի քաղաքներում և գյուղերում էներգաարդյունավետ բնակարանային ֆոնդի զարգացմանը[39]:

## Կրթություն

Կրթության չափականությունում ներառված ցուցիչները ԲԱԻ-ի բոլոր ցուցիչների շարքում ունեն զրկվածության ամենացածր ցուցանիշը: Միևնույն ժամանակ, ընթերցողները չպետք թերագնահատեն այս խնդրին անդրադառնալու կարևորությունը, քանի որ այն կարող է խորքային ազդեցություն ունենալ աղքատության այլ ասպեկտների վրա: Այդ առումով, արժեքավոր կարող է լինել կենտրոնանալ հնարավոր միջամտությունների վրա՝ ուղղված ԲԱ այլ չափականություններին՝ միևնույն ժամանակ նկատի ունենալով այն դերը, որը կարող է ունենալ կրթությունը աղքատության հարցում:

37. Տե՛ս https://armenia.un.org/sites/default/files/2023-04/2023%2002%20Armenia%20Country%20Brief.pdf#:~:text=WFP%2C%20in%20partnership%20with%20UNICEF,resistance%20and%20resilience%20to%20adversity:
38. Տե՛ս https://caritas.am/eu4energy-efficiency-and-renewable-energy-in-armenian-communities/:
39. Տե՛ս https://banks.am/en/news/newsfeed/10850:

## Աշխատանք

Քաղաքային համայնքներում աշխատաշուկայում մասնակցությունից զրկվածությունը կազմում է մոտավորապես 30%, իսկ գյուղական համայնքներում՝ 36.7%: Մինչդեռ երկարաժամկետ գործազրկության (մարզում զրկվածների 10%-ը) և արժանապատիվ աշխատանքի (մարզում զրկվածների 3.5%-ը) ցուցանիշները բավականին ցածր են: Այս ուսումնասիրությունը չի բացահայտում զրկանքների նման ցուցանիշների պատճառները: Այնուամենայնիվ, հաշվի առնելով համապատասխան աշխատաշուկա ապահովելու համար ներդրումների անհրաժեշտությունը, այս հարցը կարող է հատուկ ուշադրության արժանանալ:

ԲԱ այս ասպեկտը հասցեագրելու որոշ առաջարկվող ուղիներ կարող են ներառել.

- Հասկանալ/վերլուծել աշխատաշուկայի կարիքները համայնքի համար և ապահովել մարդկանց համապատասխան ուսուցում՝ պահանջարկը բավարարելու համար:
- Բարելավել անհատական հմտությունները և կարողությունները ձեռներեցության, արտադրության, որակի կառավարման, գյուղատնտեսության և սննդի վերամշակման տեխնոլոգիաների ուղղություններով:

Բացի այդ, այս խնդրին կարող է անդրադառնալ ԵՄ «Դիմակայուն Սյունիք» ծրագրի ՄՓՄՁ զարգացման ճյուղը, օրինակ՝ ԱԶԳ-ի կողմից իրականացվող «Սյունիքի վերականգնման, դիմակայունության և զարգացման» ծրագիրը, որի նպատակն է բարձրացնել Սյունիքի միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների և կայուն փոքրածավալ կոմունալ ենթակառուցվածքների վերականգնումն ու ճկունությունը[40]:

## Առողջապահություն

Առողջապահության չափականությունում զրկվածության մակարդակը համեմատաբար բարձր է, երբ դիտարկում ենք առողջապահական ծառայությունների հասանելիությունը (գյուղական համայնքներում զրկված է տնտեսությունների 79%-ը): Ի տարբերություն, Առողջապահական ծառայությունների մատչելիությունը զրկվածության ցածր ցուցիչներից մեկն է, ինչը կարող է հուշել, որ խնդիրը դուրս է դրամական կարիքներից: Անհրաժեշտ է նկատել, որ հիմնական խնդիրը առողջապահական հաստատությունների (հատկապես հիվանդանոցների և դեղատների) և գյուղական համայնքների միջև հեռավորությունն է՝ զուգորդված տրանսպորտի հասանելիության ցածր մակարդակի հետ:

Համապատասխան առաջարկն է առողջապահական ծառայություններ մատուցելու համար շարժական կլինիկաների համակարգի ներդրումը գյուղական բնակավայրերում՝ աշխարհագրորեն մեկուսացված և հեռավոր այն շրջաններում կամ փոքր քաղաքներում, որոնց հասանելի չեն առողջապահական ծառայություններ մատուցող հաստատությունները: Այս նախաձեռնությունն արդեն հաջողությամբ փորձարկվել է ՄԱԶԾ-ի կողմից նաև Սիսիան համայնքում («Լաբորատոր-գործիքային ախտորոշման շարժական ծառայությունների փորձարկում Բերդ, Սիսիան և Ամասիա համայնքներում»՝ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության և ՀՀ ՏԿԵՆ հետ համատեղ): Նպատակահարմար կլինի ընդլայնել նախաձեռնության աշխարհագրությունը՝ ընդգրկելով Սյունիքի մյուս համայնքները ևս:

Բացի այդ, այս խնդրին կարող է անդրադառնալ նաև ԵՄ «Դիմակայուն Սյունիք» ծրագրի սոցիալական ծառայությունների ճյուղը, օրինակ՝ «Սյունիքի մարզում առողջապահական ծառայությունների մատուցման բարելավման» ծրագիրը, որն իրականացվում է Սանտե Արմենիի («Action Santé Femmes Arménie»-ի) և ՀԲԸՄ կողմից[41]:

40. Տե՛ս https://r2dsyunik.am/en/:
41. Տե՛ս https://eu4armenia.eu/team-europe-initiative/:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ


Alkire, Sabina, and James Foster. Counting and Multidimensional Poverty Measurement. Journal of Public Economics 95 (7): 2011. https://doi.org/10.1016/j.jpubeco.2010.11.006

Alkire, Sabina, James E. (James Eric) Foster, Suman Seth, Maria Emma Santos, José Manuel Roche, and Paola Ballón. Multidimensional Poverty Measurement and Analysis. First. Book, Whole. New York, NY: Oxford University Press. 2015 https://doi.org/10.1093/acprof:oso/9780199689491.001.0001.

Alkire, Sabina, Usha Kanagaratnam, and Nicolai Suppa. A Methodological Note on the Global Multidimensional Poverty Index (MPI) 2022 Changes over Time Results for 84 Countries. Oxford. 2022. https://www.ophi.org.uk/wp-content/uploads/OPHI_MPI_MN_54_2022.pdf.

ArmStat, Demographic Database, 2022 https://armstat.am/am/?nid=209

———. Household's Integrated Living Conditions Survey anonymised microdata database, https://armstat.am/en/?nid=205

———. Statistical Yearbook of Armenia: Industry", Data as of January, 2023, https://armstat.am/file/doc/99546313.pdf

———. Statistical Yearbook of Armenia", Data as of January, 2023, https://armstat.am/file/doc/99541043.pdf

———. ARMENIA – POVERTY SNAPSHOT OVER 2019-2022, 2023. https://armstat.am/file/article/poverty_2023_en_2.pdf

———. Figures of marz of Syunik, 2022, https://armstat.am/am/?nid=953

———. SOCIO-ECONOMIC CHARACTERISTICS OF MARZES AND YEREVAN CITY OF THE RA, 2022 https://armstat.am/file/article/marzer_2022_28.pdf

———. SOCIO-ECONOMIC SITUATION OF THE REPUBLIC OF ARMENIA in 2023. JANUARY-DECEMBER, https://armstat.am/file/article/sv_12_23a_122.pdf

———. SOCIO-ECONOMIC SITUATION OF THE REPUBLIC OF ARMENIA in 2023. JANUARY-DECEMBER, https://armstat.am/file/article/sv_12_23a_6200.pdf

———. The Demographic Handbook of Armenia: Migration, 2023 https://armstat.am/file/article/demog_2023_7.pdf

ArmStat, and World Bank. "SOCIAL SNAPSHOT AND POVERTY IN ARMENIA - Statistical and Analytical Report.", 2022. Yerevan. https://armstat.am/file/article/poverty_2019_english_2.pdf.

Caucasus Research Resource Center-Armenia Foundation. Community-Level Multidimensional Poverty in Armenia. Yerevan, 2023: European Union.

Development strategy of Syunik region of RA for 2017-2025, http://syunik.mtad.am/files/docs/29670.pdf

EU4Energy Efficiency and Renewable Energy in Armenian Communities, https://caritas.am/eu4energy-efficiency-and-renewable-energy-in-armenian-communities/

Jerm Ojakh project presented in Syunik region, 2015, https://banks.am/en/news/newsfeed/10850

Nazarian G. "The Meghri Corridor: A Viable Transport Link or Geopolitical Noose?", 2021, https://evnreport.com/politics/the-meghri-corridor-a-viable-transport-link-or-geopolitical-noose/

R2D Syunik, https://r2dsyunik.am/en/

RESILIENT SYUNIK TEAM EUROPE INITIATIVE, https://eu4armenia.eu/team-europe-initiative/

WFP Armenia Country Brief, February 2023, https://armenia.un.org/sites/default/files/2023-04/2023%2002%20Armenia%20Country%20Brief.pdf#:~:text=WFP%2C%20in%20partnership%20with%20UNICEF,resistance%20and%20resilience%20to%20adversity

What is Underemployment? https://corporatefinanceinstitute.com/resources/economics/underemployment/

# ՀԱՎԵԼՎԱԾ Ա.
# ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Սույն զեկույցում ներկայացված հասարակական կարծիքի ուսումնասիրության տվյալները հավաքագրվել են ՀՀ Սյունիքի մարզում՝ դեմ առ դեմ իրականացված ներկայացուցչական հարցումների մեթոդով՝ տվյալները գրանցելու համար օգտագործելով համակարգչային ծրագիր: Մշակված մոտեցումը հնարավորություն է տվել հավաքագրել հնարավորինս ճշգրիտ տեղեկատվություն Սյունիքի մարզում առկա բազմաչափ աղքատության և դրա պատճառների մասին: Այս հետազոտության փաստացի ընտրանքի չափը կազմել է 832 դիտարկում: Դաշտային աշխատանքների ավարտից հետո ՀՌԿԿ-Հայաստանը մանրակրկիտ զտել է տվյալները: Արդյունքում, ամբողջականության, ճշգրտության, վավերականության, վերարտադրելիության և հուսալիության որակի շեմերն անցել են 663 դեպք, հետևաբար, ինդեքսի հաշվարկման համար օգտագործվել են հենց այդ 663 տնային տնտեսության տվյալները:

### Հարցման տեխնիկական ակնարկ

| Հարցման վերաբերյալ փաստեր | Տվյալներ | Նշումներ |
|---|---|---|
| **Դաշտային աշխատանքն իրականացնող կազմակերպություն** | ՀՌԿԿ-Հայաստան Հիմնադրամ | |
| **Դաշտային աշխատանքի ժամկետը** | 29 Ապրիլ 2024 –26 Մայիս 2024 | |
| **Ընտրանքի շրջանակը** | ՀՀ ընտրական տեղամասերի ցանկ | |
| **Ընտրանքի չափը** | n = 663 | |
| **Թիրախային բնակչությունը** | ՀՀ քաղաքացիներ | |
| **Ընդհանուր թիրախային բնակչությունը** | 106,425 (18+ տարիքային խումբ)[42] | |
| **Հարցման ձևը** | Տարածաշրջանային | |
| **Նմուշառման մեթոդը** | Շերտավորված կլաստերային պատահական ընտրանք | |
| **Սահմանային սխալ** | +/- 4% | 95% վստահության միջակայք |
| **Հարցազրույցի իրականացման մեթոդը** | Անհատական դեմ առ դեմ հարցազրույց՝ համակարգչային ծրագրի աջակցմամբ | |
| **Հաջողված պատասխանողների տոկոսը[43]** | Կիրառելի չէ | |
| **Հարցազրույցի լեզուն** | Հայերեն | |
| **Կշռի գործակիցը** | Հաշվարկված է տնային տնտեսությունների մակարդակի կշիռ | |

42. ArmStat demographic database https://armstat.am/am/?nid=209
43. Because of the complexity of fieldwork, not all non-responses were collected into the database, which makes it problematic to count response rate.

## I. Ընտրանքի մեթոդաբանությունը

Սյունիքի մարզի 663 տնային տնտեսությունների ներկայացուցչական ընտրանքը հավաքագրվել է տնային տնտեսություններ այցելություններ կատարելու միջոցով: Ընտրանքի ձևավորրման առաջին փուլում ընտրվել են ընտրական տեղամասերը (առաջնային ընտրանքի միավորները՝ ԱԸՄ-երը): Իսկ վերջիններս ընտրվել են պատահականության սկզբունքով՝ յուրաքանչյուր ենթաշերտում գրանցված ընտրողների թվին համաչափ հավանականությամբ: Ընտրանքի ձևավորրման երկրորդ փուլում ընտրվել են տնային տնտեսությունները (երկրորդային ընտրանքի միավորները)՝ «պատահական քայլի» սկզբունքով: Երրորդ փուլում որպես հարցվող ընտրվել է յուրաքանչյուր տնային տնտեսության այն անդամը, որը ո ամենատեղեկացվածն է: Հարցվածների բաշխվածությունն ըստ ընտրված ժողովրդագրական խմբերի ներկայացված է ստորև բերված աղյուսակներում44.

### Գենդերային բաշխումը (ըստ փաստացի և կանխատեսված ընտրանքի)

| Սեռ | Փաստացի հարցման բաշխումը (%) | Կանխատեսված բաշխումը (ԱՐՄՍՏԱՏ-ի 2022 մարդահամար) (%) |
|---|---|---|
| Տղամարդ | 47. 3 | 48. 6 |
| Կին | 52. 7 | 51. 4 |

### Տարիքային բաշխումը (ըստ փաստացի և կանխատեսված ընտրանքի)

| Տարիք | Փաստացի հարցման բաշխումը (%) | Կանխատեսված բաշխումը (ԱՐՄՍՏԱՏ-ի 2022 մարդահամար) (%) |
|---|---|---|
| 0-4 | 6.2 | 6.4 |
| 5-9 | 5.1 | 7.1 |
| 10-14 | 7.6 | 7.2 |
| 15-19 | 5.4 | 5.4 |
| 20-24 | 4.9 | 4.2 |
| 25-29 | 4.7 | 5.2 |
| 30-34 | 6.1 | 7.6 |
| 35-39 | 7.0 | 7.5 |
| 40-44 | 6.4 | 6.7 |
| 45-49 | 5.9 | 6.0 |
| 50-54 | 5.6 | 5.6 |
| 55-59 | 5.4 | 6.4 |

44. Բնակչության փաստացի բաշխվածությունը ժողովրդագրական խմբերի միջև հիմնված է ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների վրա՝ 2022 թվականի դրությամբ:

| | | |
|---|---|---|
| **60-64** | 8.4 | 8.3 |
| **65-69** | 7.4 | 6.4 |
| **70-74** | 5.7 | 4.4 |
| **75-79** | 2.4 | 1.9 |
| **80+** | 5.9 | 3.7 |

**Համայնքային բաշխվածությունը (ըստ փաստացի և կանխատեսված ընտրանքի)**

| Համայնք | Փաստացի հարցման բաշխումը (%) | Կանխատեսված բաշխումը (ԱՐՄՍՏԱՏ-ի 2022 մարդահամար) (%) |
|---|---|---|
| **Կապան** | 21.6 | 32.4 |
| **Քաղաքային** | 36.8 | 34.5 |
| **Գյուղական** | 41.7 | 33.1 |

## II. Կշռում

Հավաքագրված տվյալները կշռվել են՝ ապահովելու Սյունիքի մարզի տնային տնտեսությունների բաշխվածությունը և շտկելու չկայացած հարցումների (non-responce) պատճառով առաջացած ժողովրդագրական շեղումները: Տվյալները պարունակում են տնային տնտեսության կշիռը (hhweights), որը հաշվարկվել է բնակավայրի տեսակի (քաղաք-գյուղ) և տնային տնտեսության չափի համադրմամբ: Կշռումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից տրամադրված կենսապայմանների միասնական հետազոտության վերջին ալիքի (2022 թ.) տվյալների հիման վրա:

## III. Հարցաշար

Հայերեն և անգլերեն հարցաշարերը մշակվել են ՀՌԿԿ-Հայաստանի հետազոտական թիմի կողմից: Գործիքի համար որպես հիմք է ծառայել Տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության (ILCS) հարցաշարը45: Այն տեղայնացվել է ՕԱՄՁՆ-ի նախորդ ուսումնասիրութան46 արդյունքում ստացված դիտարկումները նկատի առնելով:

## IV. Նախնական թեստավորում

Ընդհանուր առմամբ՝ նախական թեստավորման համար 2024 թվականի ապրիլի 2-ից ապրիլի 5-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է 20 վավեր հարցազրույց, իսկ 2024 թվականի ապրիլի 2-ից մինչև ապրիլի 12-ը լրացվել են օրագրերը: Հարցվածների 80%-ը եղել են կանայք, իսկ

45. Տե՛ս https://armstat.am/en/?nid=205:
46. Caucasus Research Resource Center-Armenia Foundation. 2023. "Community-Level Multidimensional Poverty in Armenia". Yerevan: European Union.

20%-ը՝ տղամարդիկ: Ամենաերիտասարդ հարցվողը եղել է 18 տարեկան, ամենատարեցը՝ 70: Հարցազրույցները միջինում տևել են 42.4 րոպե. ամենակարճը տևել է 24.8 րոպե, իսկ ամենաերկարը՝ 83.3 րոպե: Բոլոր 20 հարցազրույցներն անց են կացվել քաղաքային բնակավայրերում:

## V. Դաշտային աշխատանքներ

Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2024 թվականի ապրիլի 29-ից մայիսի 26-ը: Հարցմանը մասնակցած ամենաերիտասարդ հարցվողը եղել է 18 տարեկան, ամենատարեցը՝ 94: Հարցազրույցները միջինում տևել են 43.3 րոպե, ամենակարճը՝ 14 րոպե, իսկ ամենաերկարը՝ 2 ժամ:

Դաշտային աշխատանքների անձնակազմը բաղկացած է եղել 12 հարցազրուցավարից: Մինչ հարցումների մեկնարկը, հարցազրուցավարների համար կազմակերպվել է մեկօրյա դասընթաց: Դասընթացի ընթացքում հարցազրուցավարները կիրառել են հարցաշարը և ընտրանքի իրականացման սկզբունքները, ինչպես նաև քննարկել են մի շարք խնդիրներ, որոնք կարող են առաջանալ դաշտային աշխատանքի ընթացքում:

## VI. Դաշտային աշխատանքի կազմակերպում

Սյունիքում դաշտային աշխատանքների ընդհանուր կառավարման և որակի վերահսկման համար պատասխանատու է եղել դաշտային աշխատանքների համակարգողը: Ընդհանուր կառավարչական և տեխնիկական վերահսկողությունն իրականացվել է ՀՌԿԿ-Հայաստանի դաշտային վերահսկողի, դաշտային աշխատանքների համակարգողի և ծրագրի ղեկավարների կողմից: Հարցազրուցավարներն ամենօրյա կապի մեջ են եղել համակարգողի հետ, որպեսզի ծանոթացնեն դաշտային աշխատանքների ընթացքին և անհրաժեշտության դեպքում ստանան համապատասխան ցուցումներ:

Դաշտային աշխատանքների ընթացքում օրագրի ձևաչափը վերանայվել է: Սկզբում այն տրվել է բաց հարցերի տեսքով՝ պարզելու հարցվողների սպառման և սննդի ծախսերը, սակայն ՀՌԿԿ-Հայաստանը հետագայում ստանդարտացրել է ձևաչափը՝ փակելով հարցերը: Տվյալների մաքրման ընթացքում կատարվել են հետադարձ ստուգման զանգեր՝ տվյալների անհամապատասխանությունները շտկելու համար:

Դաշտային աշխատանքների ընդհանուր պլանավորումը և նյութատեխնիկական ապահովումը ամրագրվել է դաշտային աշխատանքների պլանում: Հարցազրուցավարները եղել են Սյունիքի բնակիչներ, հետևաբար տվյալների հավաքագրումը կազմակերպվել է տեղում՝ դաշտային աշխատանքների համակարգողի անմիջական մասնակցությամբ:

## VII. Տվյալների մշակում

Հարցազրույցի արդյունքները հավաքագրվել են դեմ առ դեմ մեթոդով՝ SurveyCTO համակարգչային ծրագրաշարի միջոցով: Ծրագիրն ավտոմատացրել է հարցեր բաց թողնելու բոլոր օրինաչափությունները և թույլ չի տվել առաջ անցնել առանց պարտադիր հարցերի հնչեցման: Ծրագիրը թույլ է տվել տվյալները SPSS տվյալադարան ներբեռնել ուղղակիորեն՝ վերացնելով տվյալների մուտքագրման սխալները:Օրինաչափությունից բեկվող, կրկնօրինակ և անտրամաբանական տվյալները բացահայտելու համար՝ կիրառվել են տվյալների հաճախականության ուսումնասիրություն և խաչաձև համեմատություններ: Բոլոր բաց հարցերն ու «Այլ» տարբերակների պատասխանները կոդավորվել են մեկ մասնագետի կողմից՝ խուսափելու համար կոդերի տարաբնույթ մեկնաբանումից:

## VIII. Որակի ապահովում

Տվյալների որակն ապահովելու համար ՀՌԿԿ-Հայաստանը իրականացրել է որակի վերահսկման մի քանի ստուգումներ: Հարցազրույցների ձայնագրությունների 30%-ն օգտագործվել է հարցազրուցավարի կողմնակալությունը ստուգելու համար (հուշող հարցեր, սխալ կարդացված հարցեր կամ պատասխաններ և այլն): Նույն նպատակով իրականացվել են նաև հետզանգեր: Բացի այդ, յուրաքանչյուր հարցազրուցավարի համար ստուգվել են հետևյալ չափումները.

- հարցազրույցների միջին տևողությունը, սկզբը և ավարտը,
- «դժվարանում եմ պատասխանել» և «հրաժարվում եմ պատասխանել» տարբերակների քանակը,
- «այլ» տարբերակով լրացված և բաց հարցերի պատասխանների հաճախականությունն ու որակը,
- օրինաչափությունից բեկվող տվյալները (Outliers),
- անցումների տրամաբանությունը,
- օրական կատարված հարցազրույցների քանակը:

Հարցազրույցների 35%-ը հետ է զանգվել որակի լրացուցիչ ստուգումների և տվյալների պարզաբանման համար: Ընտրված «այլ» տարբերակները հնարավորության դեպքում ստանդարտացվել են:

# ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ԲԱՐ ԱՌԱՆՁԻՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՇԵՄԵՐԸ

| Հիմնարար կարիքներ | |
|---|---|
| Extreme (Food) Poverty | Տնային տնտեսությունը համարվել է զրկված, եթե տնային տնտեսության չափահասների ամսական սննդի սպառումը ցածր է պարենային աղքատության գծից (40042 ՀՀ դրամ[47]): |
| Արժանապատիվ կյանք | Տնային տնտեսությունը համարվել է զրկված, եթե հարցվողները նշում են, որ բավարար գումար չկա ամենօրյա սննդի կամ հագուստի համար: Հարցման չորս հարցերի տվյալներ օգտագործվել են այս ցուցիչում զրկվածությունը որոշելու համար, որոնք ներառում են՝ (1) մեկ հարց, որն ուսումնասիրում էր սնվելու համար բավականաչափ կերակուր չունենալու անհանգստությունը և տնային տնտեսությունում սննդի պակասի պատճառով սոված մնալը, (2) մեկ հարց՝ կապված ամեն երկրորդ օրը միս ուտելու հնարավորության հետ, ինչպես նաև յուրաքանչյուր սեզոնի համար (3) հագուստ և (4) կոշիկ ունենալու հնարավորության հետ: Եթե բոլոր հարցերի պատասխանների կեսից ավելիի պարագայում տնային տնտեսությունը զրկված է, ապա այս ցուցիչով այն համարվել է զրկված: |
| Մարդասիրական օգնություն | Տնային տնտեսությունը համարվել է զրկված, եթե վերջին 12 ամիսների ընթացքում ստացել է մարդասիրական օգնություն:<br><br>Մարդասիրական օգնության ցուցիչի ներքո հարցվողներին հարցրել են, թե (1) արդյոք նրանց ընտանիքները գրանցված են Աղքատության ընտանեկան նպաստների համակարգում կամ (2) արդյոք նրանց ընտանիքները նախորդ 12 ամիսների ընթացքում ստացել են այլ մարդասիրական նպաստներ՝ բացի Աղքատության ընտանեկան նպաստների համակարգով նախատեսվածներից: |
| Փոխանցումներից կախվածություն | Փոխանցումներից կախվածության ցուցիչը վերաբերում է այն տնային տնտեսություններին, որոնց սննդի սպառման մակարդակն ավելի ցածր է, քան պարենային աղքատության գիծը՝ ստացված փոխանցումները բացառելուց հետո: Փոխանցումների օգտագործման հնարավոր կողմնակալությունը վերացնելու համար հարցվողներից մասնավորեցվել է նաև փոխացնման նպատակը:<br><br>Զրկված են համարվել փոխանցում ստացած այն տնային տնտեսությունները, որոնց սպառումը աղքատության պարենային գծից քիչ է, իսկ փոխանցումն ուղարկվել է առօրյա ծախսերի նպատակով: |

47. Նվազագույն սպառման զամբյուղի սկզբնական գինը մեկ անձի համար ամսական 41026 է, սակայն, քանի որ հարցաշարում բացակայում էր ընդեղենի սպառումը, այն բացառվել է զամբյուղի հաշվարկից:

| Բնակարանային պայմաններ | |
|---|---|
| Սուբյեկտիվ բնակարանային պայմաններ | Տնային տնտեսությունները համարվել են զրկված, եթե իրենց բնակարանային պայմանները բնութագրվել են որպես «վատ» կամ «շատ վատ»: |
| Պատշաճ բնակարանային պայմաններ | Տնային տնտեսությունները համարվել են զրկված, եթե նրանք դժգոհել են իրենց բնակարանային պայմանների և դրա միջավայրի հետևյալ խնդիրների առնվազն մեկ երրորդից. մակերեսի սակավություն, հարևանների և շրջապատի աղմուկ, վատ լուսավորություն, ջեռուցման պակաս, խոնավություն, կաթող տանիք, քանդված պատեր և հատակ, քանդված փեղկեր և դռներ, ծանրաբեռնված երթևեկություն, արդյունաբերական աղտոտում, ջրամատակարարման և աղբահանման որակ, բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքների և բակի սպասարկում: |
| Գերբնակեցում | Տնային տնտեսությունը համարվել է զրկված, եթե հետևյալ պայմաններից որևէ մեկին չի բավարարել.<br>- մեկ սենյակ տնային տնտեսության համար,<br>- ընտանիքում մեկ սենյակ մեկ զույգի համար,<br>- մեկ սենյակ 18 և ավելի տարեկան յուրաքանչյուր անհատի համար,<br>- մեկ սենյակ 12-ից 17 տարեկան նույն սեռի մեկ զույգի կամ անհատի համար,<br>- մեկ սենյակ 12-ից 17 տարեկան յուրաքանչյուր անհատի համար, որը ներառված չէ նախորդ կատեգորիայում,<br>- մեկ սենյակ մինչև 12 տարեկան երեխաների համար:<br><br>Այն տնային տնտեսությունները, որոնք ունեցել են գերբնակեցված պայմաններում ապրող անհատներ, համարվել են զրկված: Սենյակների հաշվարկի մեջ ներառված չեն բաղնիքը, սանհանգույցը կամ խոհանոցը: |
| Առողջ ջեռուցում | Զրկված են համարվել այն տնային տնտեսությունները, որոնք ջեռուցվել են նավթով, դիզվառելիքով, փայտով կամ կենտրոնացված ջեռուցումից, էլեկտրաէներգիայից, բնական կամ հեղուկ գազից զատ այլ աղբյուրներից: |
| Կենտրոնացված ջրամատակարարման համակարգի մշտական հասանելություն | Այն տնային տնտեսությունները, որոնք ամսվա յուրաքանչյուր օրը, և օրվա յուրաքանչյուր ժամին կենտրոնացված ջրամատակարարման հնարավորություն չեն ունեցել, համարվել են զրկված: |
| Կենտրոնացված ջրահեռացում և աղբահանություն | Ցուցիչը վերաբերել է այն տնային տնտեսություններին, որոնք չեն ունեցել կենտրոնացված կոյուղի կամ կենցաղային աղբի հեռացում (աղբամուղով կամ հատուկ մետաղյա արկղում, կամ էլ բեռնատար մեքենայով):<br><br>Զրկված են համարվել այն տնային տնտեսությունները, որոնք օգտագործել են աղբահանության այլ միջոցներ կամ չեն ունեցել գործող կենտրոնացված ջրահեռացում: |

| | |
|---|---|
| Հոսող տաք ջուր | Այն տնային տնտեսությունները, որոնք չեն ունեցել գործող հոսող տաք ջրի համակարգ համարվել են զրկված: |
| Հանրային ծառայությունների որակ | Ցուցիչը չափել է տնային տնտեսությունների բավարարվածությունը ութ տարբեր հանրային ծառայություններից՝ ջրամատակարարում, ջրահեռացում, աղբահանություն, հեռախոս, էլեկտրաէներգիա, փոստ, բանկային ծառայություններ և հասարակական տրանսպորտ: Այն տնային տնտեսությունները, որոնք գոհ չեն եղել հանրային ծառայությունների ավելի քան մեկ երրորդից, կամ նշել են որ հասանելիություն չունեն դրանց, համարվել են զրկված: |
| Տրանսպորտի հասանելիություն | Ըստ ցուցիչի զրկված են այն տնային տնտեսությունները, որոնք իրենց բնակավայրերի կամ մարզային քաղաքների կամ շուկաների ճանապարհները նկարագրել են որպես վատ: Քաղաքային տնային տնտեսություններն այս ցուցիչով չեն դիտարկվել որպես զրկված: |
| Տնային տնտեսությանը պատկանող ակտիվներ | Ըստ ցուցիչի՝ զրկված են այն տնային տնտեսությունները, որոնք չունեն լրատվության սպառման միջոցներ (ռադիո, հեռուստացույց, համակարգիչ, ցանկացած տեսակի հեռախոս կամ պլանշետ), սննդի պատրաստման միջոցներ (վառարան, գազօջախ կամ էլեկտրական վառարան), սառնարան կամ կահույք:<br><br>Այն տնային տնտեսությունները, որոնք չունեն հետևյալ միջոցների խմբերից որևիցե մեկը, համարվել են զրկված: |
| **Կրթություն** | |
| Միջնակարգ կրթություն | Ըստ ցուցիչի՝ զրկված են այն տնային տնտեսությունները, որոնցում 15-ից 74 տարիքի ոչ մի անդամ չունի միջնակարգ կրթություն: |
| Պարտադիր կրթություն | Ըստ ցուցիչի՝ զրկված են այն տնային տնտեսությունները, որոնցում պարտադիր դպրոցական տարիքի առնվազն մեկ երեխա (6-17 տարեկան) դպրոց չի հաճախում: Այդ տարիքի երեխա չունեցող տնային տնտեսությունները զրկված չեն համարվել: |
| Որակյալ կրթական ծառայություններ | Ըստ ցուցիչի՝ զրկված են այն տնային տնտեսությունները, որոնք գոհ չեն կրթական ծառայություններից, կամ նշում են, որ հասանելիություն չունեն դրանց: |
| Կրթության հասանելիություն | Եթե մանկապարտեզ, տարրական կամ միջնակարգ դպրոց հաճախելու համար որևէ տնային տնտեսություն ծախսել է ավելի քան 20 րոպե քայլելու կամ հեծանիվ վարելու համար, ապա տնային տնտեսությունը համարվել է զրկված: Զրկված են համարվել նաև այն տնային տնտեսությունները, որոնց անդամները նշված հաստատություն գնալիս մեկ ժամից ավելի են անցկացրել այլ տրանսպորտային միջոցներում:<br><br>Քաղաքային տնային տնտեսություններն այս ցուցիչով չեն դիտարկվել որպես զրկված: |

| Աշխատանք | |
|---|---|
| Աշխատաշուկայի մասնակցություն | Ըստ ցուցիչի՝ զրկված են այն տնային տնտեսությունները, որոնցում աշխատանքային տարիքի (16-74) անձանց կեսից ավելին ներառված չէ աշխատաշուկայում: Այն տնային տնտեսությունները, որոնք չեն ունեցել աշխատանքային տարիքի անձինք, զրկված չեն համարվել: |
| Երկարաժամկետ գործազրկություն | Ըստ ցուցիչի՝ զրկված են այն տնային տնտեսությունները, որոնցում աշխատանքային տարիքի անդամներից որևէ մեկը աշխատանք չի ունեցել և ակտիվորեն աշխատանք է փնտրել մեկ և ավելի տարի: Այն տնային տնտեսությունները, որոնք չեն ունեցել աշխատանքային տարիքի անձինք, զրկված չեն համարվել: |
| Արժանապատիվ աշխատանք | Ըստ ցուցիչի՝ զրկված են այն տնային տնտեսությունները, որոնցում բոլոր աշխատող անդամները կամ ինքնազբաղված են կամ նպաստում են ընտանեկան բիզնեսին: Այն տնային տնտեսությունները, որոնք չեն ունեցել աշխատանքային տարիքի անձինք, զրկված չեն համարվել: |
| Թերզբաղվածություն | Ըստ ցուցիչի՝ զրկված են այն տնային տնտեսությունները, որտեղ բոլոր աշխատանքային տարիքի անձինք կա՛մ աշխատում են շաբաթական 30 ժամից պակաս (և հիմնական և երկրորդային աշխատատեղերը հաշվի առնելով, եթե կիրառելի է), կա՛մ սեզոնային աշխատողներ են, կա՛մ աշխատում են իրենց ունեցած որակավորումից ավելի ցածր որակավորում պահանջող պաշտոնում: Այն տնային տնտեսությունները, որոնք չեն ունեցել աշխատանքային տարիքի անձինք, զրկված չեն համարվել: |
| **Առողջապահություն** | |
| Առողջապահական ծառայությունների մատչելիություն | Ըստ ցուցիչի՝ զրկված են այն տնային տնտեսությունները, որոնք նախորդող 12 ամսվա ընթացքում չեն ունեցել միջոցներ վճարելու բուժհաստատությունում անհրաժեշտ առողջապահական ծառայությունների (բացառությամբ՝ ատամնաբուժական ծառայությունների) համար: Այդպիսի ծառայությունները ներառում են թեստերը, հետազոտությունները և բժշկի նշանակումները: Նրանք, ովքեր չեն ունեցել բժշկական օգնության դիմած անդամ, չեն համարվել զրկված: |
| Սովորական գործունեության դադարեցում | Ըստ ցուցիչի՝ զրկված են այն տնային տնտեսությունները, որոնցում առնվազն մեկ անդամ դադարեցրել է իր սովորական գործունեությունը հիվանդության, վնասվածքի կամ վատառողջության պատճառով: |
| Առողջապահական ծառայությունների հասանելիություն | Ըստ ցուցիչի՝ զրկված են գյուղական բնակավայրերի այն տնային տնտեսությունները, որոնք հասանելիություն չեն ունեցել առողջապահական հաստատություններին, շտապ օգնության ծառայություններին կամ դեղատներին: Այն տնային տնտեսությունները, որոնք չեն կարողացել հասնել իրենցից ամենամոտ այսպիսի հաստատություն 30 րոպեի կամ ավելի քիչ ժամանակի ընթացքում հասանելի տրանսպորտային միջոցներով, համարվել են զրկված: Քաղաքային տնային տնտեսություններն այս ցուցիչով չեն դիտարկվել որպես զրկված: |
| Առողջապահական ծառայությունների որակ | Ըստ ցուցիչի՝ զրկված են այն տնային տնտեսությունները, որոնք գոհ չեն առողջապահական ծառայություններից: |

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

CRC
ARMENIA